Azg
armenian daily

2 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2001 ԵՐԵՔՇԱԲԹԻ 177 (2381)

Թուրքիան կաջակցի ԱՄՆ-ին որոշակի պայմաններով

ՍՏԱՄԲՈՒԼ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ - ԻՐԱՆԻ ՇԱՅՆ: Սեպտեմբերի 28-ին Թուրքիայի Ազգային անվտանգության խորհուրդը, որին մասնակցել է երկրի ողջ բարձրագույն ղեկավարությունը, քննարկել է ԱՄՆ-ում ահաբեկչության հետեւանքների եւ այդ կապակցությամբ Թուրքիայի դիրքորոշման հետ կապված հարցեր: Քննարկման արդյունքում հրապարակված հայտարարությունում նշվում է, որ ահաբեկչության դեմ պատերազմի ընթացքում Թուրքիան պատրաստ է աջակցել ԱՄՆ-ին՝ ելնելով սեփական ազգային շահերից եւ այն դեպքում, եթե գործողությունները չհանգեցնեն մարդկային մեծաթիվ զոհերի ու չվնասեն միջազգային անվտանգությանը:

Օգտվելով ստեղծված իրադրությունից Ազգային անվտանգության խորհուրդն ընդունել է նաեւ հատուկ որոշում, որի համաձայն Թուրքիան շարունակելու է թուրքական Կիպրոսին ցույց տվող օգնությունը՝ այն հզորացնելու նպատակով:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ողջախոհների կազմակերպությունը

ՈԱԿ-ի 80-ամյակի առիթով

Երեկ լրացավ հայ իրականության հնագույն քաղաքական կազմակերպություններից մեկի՝ Ռամկավար Ազատական կուսակցության վերջնական կազմավորման 80-ամյակը: Վերջնական կազմավորում՝ ասելով 1921 թ. հոկտեմբերի 1-ին Պոլսում Հայ Ռամկավար եւ Հայ Ազատական կուսակցությունների միաձուլման գործընթացը, որն առ այսօր բացառիկ երեւույթ է անընդհատ տարբաղադրվող ու մասնատվող մեր քաղաքական կազմակերպությունների ֆոնի վրա, սկսվել էր դեռեւս 1885 թ. Վանում ծնունդ առած Արմենական կուսակցության, այնուհետեւ առավելաբար Պոլսում եւ Կիլիկիայում գործող Սահմանադիր Ռամկավար, Վերակազմյալ Հնչակյան եւ, արեւելահայ իրականության մեջ, ժողովրդական կուսակցությունների միջեւ համագործակցությամբ եւ, ավելի ուշ, միության բանակցություններով: Պարզապես 1920-ական թթ.-ին հայ իրականության մեջ ստեղծվել էր նոր մի կացություն, որն անհրաժեշտ էր դարձնում վերջակետ դնել ծգծգվող բանակցությունների վրա ու միասնական ուժերով, հնարավորությունների մեկտեղմամբ դիմագրավել հայ ժողովրդի առաջ ծառացած նոր մարտահրավերները: Հայրենի հողում ազգային անկախ պետության փոխարեն գոյություն էր առել նոր կարգավիճակի մի պետականություն, մինչ արեւմտահայության կյանքում պայքար էր սկսվել մի կողմից «Կիլիկյան օջախի» եւ, մյուս կողմից՝ գաղթական հայության ֆիզիկական գոյության եւ ազգային դիմագծի պահպանման համար:

Վերոհիշյալ կազմակերպությունները եւ նրանց նախորդները, բերեւս բացի Արմենականներից, ունեին մի բացառիկ ընդհանրություն՝ նրանք հեղափոխական չէին, եւ էլ ավելի բացառիկ ընդհանրություն՝ Արմենականներն էլ հեռը՝ նրանք արկածախնդիր չէին: Գաղափարապես բեւեռայնորեն հակառակ լինելով Խորհրդային Հայաստանին, նրանք Ռուսաստանի թեւարկման տակ գործող հայ կոմունիստների իշխանության մեջ տեսնում էին առաջին հերթին ժողովրդի ֆիզիկական գոյության երաշխիք: Ահա թե ինչու ռամկավար ազատականները, իրենց կողքին ունենալով Հայկական բարեգործական ընդհանուր միությունն ու ողջախոհ այլ կազմակերպություններ, առաջին մեկ օրից նյութապես օժանդակեցին Խ. Հայաստանի բարգավաճմանը, ինչպես օժանդակել էին անկախության 2,5 տարիների ընթացքում իրենց գաղափարական հակառակորդ դաշնակցական կառավարությանը: Դա ազգային քաղաքականության դեռեւս չգերազանցված դրսեւորում էր, երբ գաղափարախոսական նկատառումները ստորադասվում էին ազգային շահերին:

Իսկ ինչ վերաբերում էր սփյուռքին, ռամկավար ազատականները տասնամյակներ շարունակ աշխատեցին սփյուռքը ղեկավարել ժողովրդական սկզբունքներով, քաջալերել սփյուռքահայ մարդու բարեկեցությունը եւ, ամենից կարեւորը, նրան պահել հայրենասիրական դիրքերում եւ քաջալերել ներգաղթը: Եվ եթե այսօր սփյուռքահայությունը գերազանցապես հայրենասեր է եւ կապված Հայաստանին, դրանում իր մեծ ներդրումն ունի ՈԱԿ-ը:

Ողջամիտ այդ դիրքորոշումը դրսեւորվեց նաեւ ավելի ուշ, Խ. Միության փլուզման օրերին, երբ ՈԱԿ-ը Հայաստանում ծնունդ տվեց իր հայաստանյան կազմակերպությունը՝ ՀՈԱԿ-ին, եւ վերջինիս միջոցով մաս կազմեց Հայաստանի անկախ պետության ստեղծման գործընթացին, ուրիշ 5 կազմակերպությունների հետ ստորագրելով անկախության հանրաքվեի հայտարարության տակ: Դրանով սկսեց մարմնավորվել ՈԱԿ հիմնադիրների գլխավոր երազանքը՝ Հայաստանը տեսնել ժողովրդավար, ազատ եւ ազատական:

«Հայաստանի եւ Թուրքիայի երկխոսությունը ժամանակի պահանջն է, բայց...»

ՀՈԱԿ ատենապետ Ռուբեն Միրզախանյանի ինտերնետային ասուլիսը

– Պարոն Միրզախանյան, ժամանակին (1998 թ., հունվար) Հայաստանի առաջադ նախագահ Ռոբերտ Քոչարյանը Արմենտելի սեփականաշնորհումը անվանեց օրինակելի: Դուք համաձայ՞ն եք այդ կարծիքին: (Վալերի, Երեւան)

– Խնդիրը ոչ թե Արմենտելի սեփականաշնորհման փաստն է, այլ այն հանգամանքը, որ տվյալ կազմակերպությունը խախտում է հեռահաղորդակցական ցանցի սեփականաշնորհման ընթացքում իր ստանձնած պարտավորությունները:

– Կարո՞ղ եք մեզ ներկայացնել ձեր «ծախսերի հայտարարագիրը»: Շնորհակալություն: (Սիմոնյան Գրիգոր, Մոսկվա)

– Իմ ծախսերի հայտարարագիրը զգալի չափով համապատասխանում է եկամուտների հայտարարագրին: Շնորհակալություն:

– Ձեր կուսակցությունը ինչպիսի՞ հանգամանքներում պատրաստ կլինի բացահայտորեն ընդդիմանալ նախագահ Քոչարյանին: (Պետրոսյան Գրիգոր, Վարշավա)

– Մեր կուսակցությունն ընդդիմադիր կլինի իշխանության ինստիտուտներից որեւէ մեկի նկատմամբ, եթե վերջինս ոտնահարի ժողովրդաժողովրդական եւ տնտեսական ազատականության սկզբունքները, որոնք Ռամկավար Ազատական կուսակցության հիմնարար սկզբունքներն են:

– Որքան ինձ հայտնի է, դուք զբաղվում եք դասախոսական գործունեությամբ: Ինչպե՞ս կբնութագրեք ժամանակակից հայ ուսանողին: (Սյոմա, Վորոնեժ)

Տես էջ 4

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ժողով Ֆրանսիայի Սենատում

ԵՐԵՎԱՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ֆրանսիայի Սենատում՝ նրա նախագահ Քրիստիան Պոնսլեի մասնակցությամբ, կայացել է «Հիշողության եվրոպա» կազմակերպության ժողովը՝ նվիրված Հայոց ցեղասպանությանը, ինչպես նաեւ՝ երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում եվրոպական հիշողության մեջ դրոշմված ողբերգական իրադարձություններին: Բանախոսները՝ Հայոց ցեղասպանության մասնագետ Իվ Թեռնոնը, Սենատի անդամներ, քաղաքագետներ, իրենց ելույթներում կանգ են առել այդ իրադարձությունների պատմության վրա, որոնք վերապրողները այսօր համակված են վկայելու, իրենց հիշողությունը սերունդներին փոխանցելու կամքով:

Ըստ «Ազատության», կազմակերպությունը Փարիզում այս տարվա հունվարին ստեղծվել է հենց այդ նպատակով՝ համախմբել եւ հետազոտողների, ուսումնական հաստատությունների տրամադրության տակ դնել այն բոլոր տեղեկությունները, որոնք վերաբերում են եվրոպայի պատմությանը՝ 1915-1945 թվականների ողբերգական իրադարձությունների շրջանում: Կազմակերպության կանոնադրությունը ստորագրել եւ նրա գործունեությանն են միացել եվրոպայի մի շարք երկրների տարբեր կազմակերպություններ:

Քրիստիան Պոնսլեն, որն այս կազմակերպության հովանավորն է, բացելով ժողովը, կարեւորել է հիշողության պահպանումն ու սերունդներին փոխանցումը, մասնավորապես հիշատակելով այն փաստը, որ Ֆրանսիայի Սենատը վերջերս ճանաչել է Հայոց ցեղասպանությունը: Ժողովի վերջում Իվ Թեռնոնն իր ընդդիմությունն է հայտնել թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի հանդեպ, ասելով, որ այն կազմակերպված է Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության պահանջը մոռացնել տալու նպատակով:

Գերմանիան մնում է Թուրքիայի դաշնակիցը

ԵՐԵՎԱՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Գերմանիայի խորհրդարանը հրաժարվել է ճնշության առնել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Այս մասին հաղորդելով, «Հյուրիթը» նշել է, որ Գերմանիայի արտգործնախարարությունն է պնդել, թե ճնշարկումը ծանր հարված կհասցնի թուրք-գերմանական կապերին եւ պատգամավորներին կոչ արել մերժել Հայոց ցեղասպանության ճանաչումը ճնշարկելու դիմումը: Վերջինիս տակ հավաքված է 14 հազար ստորագրություն:

Կրկին զինված հարձակում Զաֆաթալայում

ԵՐԵՎԱՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Սեպտեմբերի 29-ի գիշերը զինված հարձակում է տեղի ունեցել Ադրբեջանի հյուսիսում, Կաթեխի գյուղի մոտ գտնվող ռուսական հենակետի վրա, ինչի հետեւանքով զոհվել է տեղի մի բնակիչ եւ վիրավորվել մեկ ռուսական «525-րդ» բերը, հանցագործները, տեղում թողնելով զենքի մի մասը միայն այն ժամանակ են հեռացել, երբ օգնության հասած ռուսական ջոկատը կրակ է բացել նրանց վրա: Թերթը նշում է, որ Վրաստանին սահմանակից ադրբեջանական Զաֆաթալա շրջանում վերջին ժամանակներս արձանագրվող այդ հարձակումները ռուսական հենակետերի վրա հազվադեպ երեւույթ չեն: Ներկայումս շրջանը գտնվում է Ադրբեջանի ներքին զորքերի հսկողության տակ, տարվում է հետաքննություն:

Աֆղանստանում մարտեր տաջիկական սահմանի հարեւանությամբ

ԴՈՒՇԱՆԲԵ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հյուսիսային դաշինքի ուժերի եւ «Թալիբան» շարժման ջոկատների միջեւ դիրքային մարտեր են մղվում տաջիկա-աֆղանական սահմանի անմիջական մերձավորությամբ, Փյանջի սահմանապահ ջոկատի «Կուլեթին» ուղեկալից ոչ հեռու: «Նորություններ» գործակալության հաղորդմամբ, կողմերը կիրակի գործադրել են տանկեր եւ հրաձգային զենք: Տաջիկստանում ռուս սահմանապահների մամլո ծառայության տվյալներով, տուժածներ սահմանապահների շրջանում չկան:

Այս ամիս Հայաստան կայցելեն Ռումինիայի եւ Վրաստանի նախագահները

ԵՐԵՎԱՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հոկտեմբերի 8-9-ը Հայաստան կայցելի Ռումինիայի նախագահ Իոն Իլիեսկուն, իսկ հոկտեմբերի 23-24-ը՝ Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն: Այս մասին հայտնեցին ՀՀ ԱԳՆ հասարակայնության հետ հարաբերությունների վարչությունից:

Նախատեսվում է նաեւ, որ հոկտեմբերի 4-6-ը Հայաստան կայցելի Փախստականների հարցերով նորվեգական խորհրդի գլխավոր քարտուղար Ս. Սորլինը, հոկտեմբերի 6-9-ը՝ Նորվեգիայի ԱԳՆ պատվիրակությունը, հոկտեմբերի 19-20-ը՝ Ուկրաինայի ԱԳ նախարար Ա. Զլենկոն, իսկ հոկտեմբերի 30-31-ը՝ Նիդեռլանդների ֆինանսների նախարար Խ. Զալմին:

Նույն աղբյուրից հայտնեցին նաեւ, որ ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը հոկտեմբերի 15-ին կմասնակցի ՅՈՒՆԵՍԿՕ-ի 31-րդ կոնֆերանսին (Փարիզ), հոկտեմբերի 30-ին՝ Հայաստան-Եվրամիություն համագործակցության խորհրդի հանդիպմանը (Բրյուսել/Լյուքսեմբուրգ):

«ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ» ՄԱՅՐՈՒՂԻ

Ճանապարհ, որ տանում է դեպի անկախության ամրապնդում

Արցախի ողնաշարը կազմող «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհի առաջին 20 կիլոմետրանոց հատվածը սեպտեմբերի 28-ին հանձնվեց շահագործման: Ասկերանի եւ Մարտակերտի շրջաններն իրար կապող այս ճանապարհահատվածի շինարարությունը սկսվել է 2000 թ. հուլիսին, որի աշխատանքներն իրականացրել են «Արցախավտոճանապարհ» ՊՁ-ն, «Վրեժ» եւ «Քարավան» շինարարական կոոպերատիվները:

Ինչպես նշեց «Արցախավտոճանապարհ» ՊՁ գլխավոր տնօրեն Ռոլես Աղաջանյանը, թեեւ ճանապարհի բացումը պաշտոնապես տեղի է ունեցել, սակայն որոշ աշխատանքներ դեռ պիտի կատարվեն, որոնք առավելագույնը մեկ շաբաթ կտեւեն: Արդեն հայտարարվել է եւս երեք հատվածների կառուցման մրցույթ, որի առաջին փուլը կայացել է վերջերս:

Նախքան ճանապարհահատվածի բացման հանդիսավոր արարողությունը, լրագրողների «օգակում» հայտնված «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Վահան Տեր-Ղեւոնդյանը նշեց, որ Արցախի ողնաշարի կառուցումը հիմնադրամի նպատակային ծրագրերից մեկն է, եւ առաջիկա հեռուստամարաթոնից հանգանակված գումարները պիտի ծախսվեն բացառապես ավտոճանապարհի կառուցման վրա: Լրագրողների այն հարցին, թե հնարավո՞ր է, որ այս տարի մարաթոնը տեղի չունենա, որն Տեր-Ղեւոնդյանը պատասխանեց, որ առայժմ որեւէ փոփոխության մասին կապված նոյեմբերի 22-ի թելեթոնի ծրագրերի հետ, խոսք չկա:

Տես էջ 3

տեղական

Արմենտելը հիմնավորված հաշվարկներ չի ներկայացրել

Նշում են տրանսպորտի եւ կապի նախարարությունում

Հայաստանում արագագործ ինտերնետ կապի խնդիրը հրատապ լուծում է պահանջում: Արմենտելի միջազգային ելքի կապուղիների չտրամադրմանը եւ դրա պատճառով արագագործ ինտերնետի փաստացի բացակայությանն «Ազգն» անդրադարձել էր վերջերս («Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտը հետընթաց է ապրում», 19 սեպտեմբերի, 2001 թ.): Հրապարակման մեջ ոլորտի մասնավոր ընկերություններից մեկի ղեկավարն իր մտահոգությունն էր արտահայտել ստեղծված իրավիճակի կապակցությամբ: Այս հարցի վերաբերյալ խոսացել էինք հրապարակել համապատասխան գերատեսչությունների պարզաբանումները: ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Սամվել Ստեփանյանի հետ մեր հարցազրույցում («Ազգ», 20 սեպտեմբերի, 2001 թ.) հարցերից մեկն առնչվում էր հենց այս խնդրին: Սամվել Ստեփանյանը պատասխանել էր, որ «ընկել ենք բյուրոկրատական քաշքշուկի մեջ», քանի որ ոչ Արմենտելը, ոչ կապի եւ տրանսպորտի նախարարությունն ըստ էության չեն պատասխանում իրենց հարցերին: Այս անգամ ներկայացնում ենք ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության տեսակետը, որի վերաբերյալ մեզ պարզաբանումներ տվեց նախարարության կապի եւ տեղեկատվայնացման վարչության պետի տեղակալ Գրիգոր Սաղյանը:

Նա նշեց, որ ներկայումս, իրոք, հասատված չեն արբանյակային սեգմենտի եւ մանրաթելային կապուղիներով արագագործ միջազգային ելքի սակագները: Արմենտելը պետք է դրանք կիրառելուց 60 օր առաջ ներկայացնի առաջարկություններ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությանը: Վերջինս այդ առաջարկությունները ներկայացնում է ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությանը, որ հետ համաձայնեցնելուց հետո տալիս է համապատասխան հրաման սակագների հաստատման մասին: Ինչն էլ գրանցվում է ՀՀ արդարադատության նախարարությունում:

Ըստ վարչության պետի տեղակալի, Արմենտելը երկու-երեք անգամ ներկայացրել է առաջարկներ արբանյակային սեգմենտի սակագնի վերաբերյալ: Դրանք չեն ընդունվել, որովհետեւ հիմնավորված հաշվարկներ չեն եղել ներկայացված: Մանրաթելային կապուղիներով արագագործ միջազգային ելքի սակագները ընդհանրապես չեն առաջարկվել: Նախարարությունն Արմենտելին նախազգուշացրել է եւ ժամկետ է սահմանել, որ բոլոր չհաստատված սակագների վերաբերյալ առաջարկներ ներկայացվեն:

Իսկ ի՞նչն է պատճառը, որ նախարարությունը հրաժարվել է հաստատել արբանյակային սեգմենտի սակագինը: Այս հարցին ի պատասխան Գրիգոր Սաղյանը մեզ մատնացույց արեց «Հեռահաղորդակցության մասին» օրենքի համապատասխան հոդվածը, որտեղ նշվում է, որ բացառիկ իրավունքով մատուցվող ծառայությունների սակագները լիազորված մարմինը հաստատում է ելնելով հեռահաղորդակցության ցանցերի շահագործման, սպասարկման, վերազինման եւ զարգացման հետ կապված ծախսերի ծածկման, կապիտալ ներդրումների մատուցման, շահութաբերության ապահովման, ինչպես նաեւ տնտեսվարման շուկայի այլ պահանջներից, որոնք ամրագրված են լիցենզիայով: Այսինքն սկզբունքը տրված է, բայց Արմենտելն այդ սկզբունքին համապատասխան սակագին չի առաջարկել:

Եթե, այնուամենայնիվ, Արմենտելն այդպես էլ հիմնավոր հաշվարկված սակագներ չներկայացնի, ապա որպես «ինքնիշխան պետություն Հայաստանն իրավունք ունի լիցենզիան վերցնել կամ լիցենզիայում կատարել համապատասխան փոփոխություն», նշեց կապի տեղեկատվայնացման վարչության պետի տեղակալը: Նա միաժամանակ ավելացրեց, որ դա ծայրահեղ միջոց է, եւ նախարարությունն այժմ չի պատրաստվում դիմել դատական ատյաններ: Նա հույս ունի, որ երկու կողմերն էլ ի վերջո այս հարցի վերաբերյալ արդյունքի կհասնեն խորհրդակցությունների եւ բարյացակամ քայլերի միջոցով, ինչն, ի դեպ, ամրագրված է լիցենզիայում:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Պյոտր Սուլիմկոն ՌԴ գլխավոր հյուպատոս Գյումրիում

ԳՅՈՒՄՐԻ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՌԴ նախագահի հրամանագրով, Պյոտր Սուլիմկոն նշանակվել է Հայաստանում ՌԴ դեսպանատան Գյումրու գլխավոր հյուպատոս:

Գյումրիում ՌԴ հյուպատոսարան բացելու որոշումը ծնվել է դեռեւս անցած տարի, մինչեւ Սանկտ Պետերբուրգում ՀՀ գլխավոր հյուպատոսարանի բացումը, որն արդեն մեկ տարի գործում է: Անցած տարի ՌԴ կառավարությունը հաստատեց Գյումրու հյուպատոսարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու ֆինանսավորումը, սկսվեց դիվանագիտական կառույցի համար շենքի որոնումը, եւ ընտրությունը կանգ առավ քաղաքի բուն կենտրոնի պատմաճարտարապետական հուշարձան համարվող, այժմ վթարային վիճակում գտնվող դատախազության նախկին շենքի վրա: ՌԴ նախագահի Հայաստան կատարած այցից հետո, Գյումրի ժամանեցին ՌԴ արտաքին քաղաքական գերատեսչության մի խումբ պատասխանատուներ եւ գլխավոր հյուպատոսը: Նրանք հայտնեցին, որ չեն սպասելու մինչեւ շենքի վերականգնման ավարտը, այլ ժամանակավորապես կվարձակալեն որեւէ հարմար շենք, որտեղ եւ կգործի հյուպատոսարանը: Կառույցում աշխատելու է երեք դիվանագետ՝ գլխավոր հյուպատոսը, փոխհյուպատոսը եւ քարտուղարը:

Ըստ Պ. Սուլիմկոյի, հյուպատոսարանի բացումով առավել արդյունավետ կդառնան Շիրակի մարզի եւ Ռուսաստանի տարածաշրջանների փոխշահավետ համագործակցությունն ու կամրապնդվեն տնտեսական կապերը:

Ն. Հունանյանը մնաց առանց դատապաշտպանի

Վերջինիս մահվան պատճառով

«Հոկտեմբերի 27»-ի գործով դատավարության երկուշաբթի օրվա նիստը տեղի չունեցավ՝ հետաձգվելով մինչեւ չորեքշաբթի: Պատճառն ամբաստանյալ Նաիրի Հունանյանի պաշտպան Արտավազդ Կարապետյանի մահն էր: Կարապետյանը, որ պետական պաշտպան էր՝ փաստաբանների միության կողմից երաշխավորված, հանկարծամահ էր եղել շաբաթ օրը՝ սեպտեմբերի 29-ին:

Ցավ հայտնելով կատարվածի կապակցությամբ՝ դատավոր Սամվել Ուզունյանը տեղեկացրեց, որ փաստաբանների միությունն առաջիկա օրերին, հավանաբար արդեն չորեքշաբթի օրը, ամբաստանյալին նոր պետական պաշտպան կերաշխավորի: Ամբաստանյալը, որն, իր իսկ տեղեկացմամբ, նյութական հնարավորություն չունի դատապաշտպան վարձելու, կրկին համաձայնություն տվեց պետական պաշտպան ունենալու տարբերակին: Հիշեցնենք, որ Ա. Կարապետյանի անակնկալ մահվան պատճառով հետաձգվեց նաեւ Հունանյանի՝ երկար սպասված հայտարարության ունկնդրումը:

Ա. ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Եհովայի վկաներն անհանգստացնում են

ԵՐԵՎԱՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այսօր Հայաստանում գրանցված են 50 կրոնական կազմակերպություններ: Չնայած իր խիստ ակտիվ գործունեությանը, դեռեւս գրանցված չէ «Եհովայի վկաներ» կազմակերպությունը. նրա կանոնադրությունը չի համապատասխանում ՀՀ «Խղճի ազատության մասին» օրենքին: ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի հարցերով պետական խորհրդում հայտնեցին, որ իրենք շաբաթ-նամակներ են ստանում «Եհովայի վկաների» գործունեության վերաբերյալ, որոնց հիմնական մասն առնչվում է անչափահասների հոգեորսությանը, անօրինական քարոզչությանը, այլ գործունեությանը:

Ատոմ Ոսկանյանը եւ Արմեն Պետրոսյանը ազատվել են դեսպանի պաշտոնից

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը սեպտեմբերի 29-ին հրամանագիր է ստորագրել Ատոմ Ոսկանյանին Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպանի պարտականություններից ազատելու մասին: Հանրապետության նախագահի նույն օրվա մեկ այլ հրամանագրով Արմեն Պետրոսյանն ազատվել է Հունաստանի, համատեղության կարգով նաեւ Կիպրոսի, Խորվաթիայի, Սլովենիայի, Ալբանիայի, Հարավսլավիայի Դաշնային հանրապետություններում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանի պարտականություններից:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ

Ձեռնադրվեցին 4 նոր եպիսկոպոսներ

ՄԱՅՐ ԱԹՈՌ. ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2001 Թ.: Սեպտեմբերի 30-ին, Մայր աթոռ Սբ. Էջմիածնում հընթացս սբ. պատարագի ծեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց հայրապետի տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնադրություն եւ օծում: Հայ եկեղեցու եպիսկոպոսաց դասը համալրեցին Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի առաջնորդ Տ. Եզրաս վրդ. Ներսիսյանը, Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն վրդ. Ադամյանը, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միխայել ծ. վրդ. Աջապահյանը եւ Հարավային Ռուսաստանի թեմի առաջնորդ Տ. Մովսես վրդ. Մովսիսյանը:

Ընդունված կարգի համաձայն, նախորդ օրը՝ սեպտեմբերի 29-ին, հավարս երեկոյան ժամերգության Իջման Սուրբ սեղանի առջեւ կատարվեց ուխտադրության կարգ, որի ընթացքում չորս ընծայացուները Իջման սբ. սեղանի առջեւ հանուն Ամենասուրբ Երրորդության երդվեցին հավատարիմ մնալ Սբ. Ավետարանին, Հայաստանյայց Առաքելական սբ. եկեղեցու սրբազան կանոններին եւ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնին: Ապա, համբուրելով Սբ. Խաչն ու Սբ. Ավետարանը, ընծայացուները ստորագրեցին երդմնագրերը:

Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 30-ին, պատարագի ընթացքում, Սբ. Ստեփանոս խորանի առջեւ Ամենայն հայոց Հայրապետը նախ կատարեց ընծայացուների հավատի ուղղափառության քննություն: Ձեռնադրվելիք եպիսկոպոսների մասին Վեհափառ հայրապետին վկայեցին հայ եկեղեցու նվիրապետական ասպիճանների ներկայացուցիչները՝ դպիրներ, կիսասարկավագներ, սարկավագներ, քահանաներ, եպիսկոպոսներ, ինչպես նաեւ ժողովրդի ուսեւոր եւ չքավոր խավերը ներկայացնող երկուական աշխարհականներ:

Սբ. պատարագը շարունակվեց Մայր տաճարի ավագ խորանին: Ընծայացուները դառնալով դեպի հավատացյալ ժողովուրդը՝ վեր բարձրացրին իրենց ձեռքերը՝ ի նշան աշխարհիկ կյանքից հրաժարման եւ հոգեւոր կյանքին նվիրման: Օծելով ընծայացուների ճակատներն ու աջ ձեռքերի բուռ մատները, Վեհափառ հայրապետը բոլոր չորս ընծայացուներին կոչեց եպիսկոպոսության, հավատով, որ նրանք «պիտի կարողանան նվիրումով, սիրով եւ իմաստությամբ ղեկավարել իրենց վստահված թեմերը, առաջնորդել իրենց վստահված հոտը Քրիստոսի Սբ. Ավետարանի պատվիրաններով»:

Արարողության ընթացքում նորաօծ եպիսկոպոսներին հանձնվեցին եպիսկոպոսական իշխանության խորհրդանիշեր՝ եպիսկոպոսական գավազաններ եւ մատանիներ, ինչպես նաեւ ի նշան Աստծո կենաց խոսքի անձանձիր քարոզչության՝ Սբ. Ավետարան: Նորընծա եպիսկոպոսներին տվեցին նաեւ եմիփորոններ, որոնք բացառապես եպիսկոպոսական զգեստի մաս են կազմում:

Հավարս սբ. պատարագի, Գարեգին Բ հայրապետի նախագահությամբ տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում Հայոց հայրապետը նորաօծ եպիսկոպոսներին նվիրեց պանակներ՝ իբրեւ եպիսկոպոսական իշխանության խորհրդանիշ:

«Սբ. Ներսես Շնորհալի» շքանշան Շահե արք. Աճեմյանին

Շաբաթ օրը, սեպտեմբերի 29-ին, Երեւանի պետհամալսարանի ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանի նախաձեռնությամբ համալսարանի փոքր դահլիճում տեղի է ունեցել համեստ մի հանդիսություն՝ նվիրված համալսարանի աստվածաբանական ֆակուլտետի դեկան, դոկտ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի ծննդյան 75-ամյակին: Հանդիսությանը մասնակիցների շաս նեղ շրջանակ է հրավիրված եղել՝ ֆակուլտետների դեկաններ եւ Մայր աթոռի մի քանի ներկայացուցիչներ: Անակնկալորեն հանդիսության դահլիճ է մուտք գործել Ամենայն հայոց հայրապետը, որն իր գնահատանքի ու օրհնության խոսքն է ասել եւ հոբելյարին հանդիսավորապես շնորհել «Սբ. Ներսես Շնորհալի» շքանշան:

Շնորհավորում ենք:

Ի լուր լրագրողների

Մամուլի ազգային ակումբը «Հոգեւոր Հայաստան» ծրագրի շրջանակներում լրագրողներին հրավիրում է հանդիպման ՀՀ նախագահի մշակույթի եւ ազգային փոքրամասնությունների գծով խորհրդական, ՀՀ պետական մրցանակների շնորհման հանձնաժողովի նախագահ ՌԱԶՄԻԿ ԴԱՎՈՅԱՆԻ հետ:

Հանդիպումը կկայանա այսօր հոկտեմբերի 2-ին, ժամը 11-ին, ՄԱԱ-ում:

ՄԱՄՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ «ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն / հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն / հեռ. 529353
Apple Macintosh համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010

ՈՒՇԱԳԻՐ

Ձեռնարկումներ՝ կուսակցական ներուժի հնարավորությունները բացահայտելու ճանապարհին

ՀՌԱԿ ղեկավարության հանդիպումն Արթիկի բնակչության հետ

ՀՌԱԿ «Արթիկ» ակումբի նորագիր անդամներին կուսակցական տոմսեր հանձնելու, ինչպես նաեւ նրանց երդմնառության արարողությունն անցկացնելու նպատակով այդ քաղաքի ՀՌԱԿ գրասենյակ այցելեցին կուսակցության ատենապետ Ռուբեն Միրզախանյանը, փոխատենապետ Հարություն Առաքելյանը, Հանրապետական վարչության անդամներ Գառնիկ Հովակիմյանը, Ռոբերտ Մավիսակալյանը, «Կենտրոն» եւ «Այգեստան» ակումբների ատենապետներ Հակոբ Գրիգորյանն ու Արմեն Ստեփանյանը, Երուսաղեմի ռամկավարական ակումբի ներկայացուցիչ Սարո Նազգաջյանը: Արթիկցի ռամկավարների հետ կուսակցության ղեկավարության՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական, ներկուսակցական հարցերի վերաբերյալ քննարկման հիմնական մասը, սակայն, ակումբի գրասենյակից «տեղափոխվեց» Արթիկի մշակույթի տուն, ուր ընդարձակ մի հավաք էր կազմակերպված՝ քաղաքի բնակչության եւ ՀՌԱԿ ղեկավարության մասնակցությամբ: Անկեղծ, անկաշկանդ հարցուփորձասխանին, որի ընթացքում բնակիչներն իրենց հուզող խնդիրներով դիմում էին կուսակցության ղեկավարությանը, նախորդեց ՀՌԱԿ ատենապետ Ռուբեն Միրզախանյանի ելույթը:

ՀՌԱԿ ատենապետը նշեց, որ Արթիկը չափազանց քաղաքականացված մի բնակավայր է, ուր իրենց գործունեությունն են ծավալել Հայաստանում գործող բազմաթիվ կուսակցություններ: Այդ կուսակցությունների գրասենյակներն, ի դեպ, տեղակայված են միեւնույն շենքում, որտեղ էլ միմյանց հարեւանությամբ քաղաքական տարբեր ուժերը գոյակցում են: Ո՞րն է լինելու ՀՌԱԿ-ի գործելակերպը քաղաքական այդ խայտաբղետ ուժերի համապատկերում: Քանի որ առջեւում Աժ ընտրություններն են, որոնց ՀՌԱԿ-ը մասնակցելու է գործի դնելով քարոզչական ու կազմակերպչական հնարավոր միջոցները, ապա այսօր անհրաժեշտ է վերսին ճշտել դիրքորոշումները, իրապես գնահատել սեփական տեղն ու նշանակությունը ներկայիս քաղաքական դաշտում, ճիշտ եւ արդյունավետ նպատակաուղղելով կուսակցության ներուժը, գործունեությունը: Անփոփոխ է մնալու, սակայն, հիմնականը. ՀՌԱԿ-ն ինչպես իր գոյության ողջ ընթացքում, այսուհետ էլ հավատարիմ է մնալու տնբնակչության կողմից՝ ակնկալիքով, թե դեռեւս ամեն ինչ կորած չէ, ավանդները երբեւէ գուցե վերադարձվեն: Ռ. Միրզախանյանը հարցի առնչությամբ կոչ արեց ներկաներին սին հույսերով չտարվել, առավել եւս չհավատալ այն կեղծ, լավատես քաղաքական գործիչներին, որոնք քաջ գիտակցելով իրենց խոստումների անիրագործելիությունը, հանուն շահադիտական նպատակների, մարդկանց հույս են ներշնչում, թե ավանդները ոչ հեռու ապագայում կվերադարձվեն եւ այլն, եւ այլն: «Մենք չենք ցանկանում որեւէ մեկին խաբել: Ֆինանսական այնպիսի աղբյուր, որը հնարավորություն կտար վերադարձնել գողացված ավանդները, մենք ոչ այսօր, ոչ էլ մոտ ապագայում չենք տեսնում», անկեղծորեն պատասխանեց նա:

«96 թ.-ի նախագահական ընտրությունների ընթացքում ո՞ւմ թեկնածությունն է պաշտպանել ՀՌԱԿ-ը», հնչեց որոշակի ենթատեքստ պարունակող հարցը: Ռ. Միրզախանյանը, որն արդեն տարբեր առիթներով բազմիցս պարզաբանումներ է տվել այս հարցի առնչությամբ, չզլացավ հերթական անգամ կրկնել. «Լեւոն Տեր-Պետրոսյանի»: Այս թեկնածուին պաշտպանելու՝ կուսակցության հայտնած դիրքորոշման նույն օրը ես հրաժարական տվեցի եւ հեռացա ատենապետի պաշտոնից: Սակայն իմ եւ ՀՌԱԿ Հանրապետական վարչության միջեւ այն ժամանակ ծագած դիրքորոշումների հակասությունը որեւէ կերպ չի նշանակում, թե ես ճիշտ էի, նրանք՝ սխալ: Պարզապես իրավիճակն անելանելի, փակուղային էր. վերընտրել մեզ համար անընդունելի թեկնածու Նախորդ նախագահի՞ն, թե՞ ոչ պակաս անընդունելի թեկնածու Վազգեն Մանուկյանին: ՀՌԱԿ-ն ընտրեց չարյաց փոքրագույնի տարբերակը, իսկ ես այլ ելք չտեսա, քան հեռանալ քաղաքական ասպարեզից»: Հավաքի ընթացքում հնչեցին բազմաթիվ այլ հարցեր, որոնց վերաբերյալ իրենց կարծիքները հայտնեցին նաեւ ՀՎ անդամներն ու կուսակցական մյուս գործիչները: Ռ. Մավիսակալյանը մի առիթով հույս հայտնեց, թե առաջիկա ընտրություններում, ի տարբերություն նախորդի, պետք է ամեն գնով կանխարգելել ձայների վաճառք կոչված երեւույթը, իսկ ազատ, արդար ընտրություններում քվեարկողներն էլ կկարողանան իրենց թեկնածուին պահանջներ առաջադրել, նրա հետ մշտապես հաղորդակցվել: Արմեն Ստեփանյանը եւս նշեց, որ գոնե առաջիկա խորհրդարանական ընտրություններում ժողովուրդը պիտի գիտակցված կերպով նախապատվությունը տա առողջ քաղաքական ուժերին:

Արթիկի բնակիչներին ողջույնի կարգաստ, սակայն ջերմ խոսքով դիմեց Երուսաղեմից ժամանած հյուր՝ Սարո Նազգաջյանը: Նա տեղեկացրեց նաեւ, որ Երուսաղեմի՝ 2000 հոգուց բաղկացած հայ համայնքում 1948 թ.-ից ի վեր գործում է ՌԱԿ ակումբ: Ռամկավարների թիվն այդ համայնքում հասնում է 168-ի, ինչը բավականին պատկառելի թիվ է՝ 2000 հայերից կազմված գաղութի համապատկերում: «Մենք՝ ռամկավարներս, ազդեցիկ ուժ ենք համարվում տեղի համայնքում», անթաքույց հպարտությամբ նշեց նա: Արթիկցիների համար կազմակերպված հավաքի քաղաքական մասին հաջորդեց համերգայինը. ՀՌԱԿ-ի հրավերով ներկաների համար ժողովրդական երգերի ծրագրով հանդես եկան երգչուհի Սուսաննա Սաֆարյանն ու իր անսամբլը:

ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ

Վարդան Արամի Մուսախանյան

82 տարեկանում կյանքից հեռացավ Հայաստանի իրավաբանների ավագ սերնդի ներկայացուցիչ, հանրապետության վաստակավոր իրավաբան Վարդան Արամի Մուսախանյանը:

Վ. Մուսախանյանը ծնվել է 1919 թ., Երեւանում: 1939 թ. զորակոչվել է խորհրդային բանակ, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: 1946 թ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը: 1948 թ. ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրան, իսկ 1956 թ. պաշտպանելով գիտական թեզ՝ ստացել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1949 թ. սկսած Վ. Մուսախանյանն աշխատանքի է անցել Համամիութենական իրավաբանական հեռակա ինստիտուտի Երեւանի մասնաճյուղում, նախ՝ որպես դասախոս, ապա՝ 1952-54 թթ. որպես տնօրեն: 1954-56 թթ. Վ. Մուսախանյանը եղել է ԵՊՀ պրոռեկտորը, 1970-74 թթ.՝ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի դեկանը, խորհրդային իրավունքի միջբուհական ամբիոնի վարիչը:

Վ. Մուսախանյանը մեծ ներդրում ունի նաեւ գիտության բնագավառում: Նրա գրչին են պատկանում երկու տասնյակ գիտական աշխատանքներ, այդ թվում՝ ուսումնական ձեռնարկներ:

Վարդան Մուսախանյանի՝ լավագույն մարդու, վաստակաշատ իրավաբանի հիշատակը միշտ վառ կմնա հանրապետության իրավաբանական հասարակայնության, նրա բազմաթիվ սաների եւ գործընկերների սրտերում:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐԱՏ,
ԵՊՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՏՈՆԱԽՄԲՈՒԹՅՈՒՆ

Առաջին բերքի տոնը Լոռու մարզում

Անցած շաբաթ օրը Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանի Գրիգորակարակ համայնքի «Հեղինաք» հանգստավայրում տեղի ունեցավ «բերքի տոն», որը վերածվեց ժողովրդական տոնախմբության: Տոնին մասնակցում էին մարզի գրեթե բոլոր համայնքները: Նրանք ըստ տարածաշրջանների՝ հարեւանությամբ դասավորված ներկայացնում էին իրենց ստեղծած բերքն ու բարիքը:

Տոնախմբությունը սկսվեց Վանաձորի «Բոհեմ» կամերային թատրոնի դերասանների փոքրիկ ներկայացմամբ: Ապա բեմ ելան մարզկենտրոնի տեխնոլոգիական քոլեջի ուսանողուհիները՝ ներկայացնելով տոնին համահունչ զգեստների հավաքածու:

Ստեփանավանի եւ Տաշիրի տարածաշրջաններում բերքի օրհնությունը կատարեց Բարսեղ աբեղա Փիլավչյանը: Ողջույնի խոսք ասացին մարզպետ Հենրիկ Քոչինյանը, ՀՀ վարչապետի խորհրդական Վլադիմիր Սովսիսյանը եւ ուրիշներ:

Լոռու մարզի բերքահավաքի այս տարվա արդյունքները ներկայացրեց մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ Վոլոդյա Բունիաթյանը՝ նշելով, որ այս տարի անհամեմատ առատ բերք է եղել: Հացահատիկի բերքը, օրինակ, Կուրթանում 1 հա-ից 62,4 ցենտներ է ստացվել, որի համար գյուղապետը շնորհավորագիր եւ նվեր ստացավ: Հանձնվեցին նաեւ շնորհավորագրեր եւ մրցանակներ՝ «Լավագույն սերմնաբույծ», «Լավագույն կոմբայնավար», «Լավագույն անասնապահական տնտեսություն», «Լավագույն պանրագործ»:

Հնչեցին ավանդական դուդուկն ու զուռնան: Ելույթ ունեցան Վանաձորի «Հորովել» երգի-պարի համույթը, Ստեփանավանի եւ Լեջանի պարային խմբերը, Վարդաբլուրի երգի-պարի, Ալավերդու ժողգործիքների համույթները, տարեցների «Լեռնապատ» պարային խումբը եւ ուրիշներ:

Տոնախմբությունն ուղեկցվում էր գինու եւ բերք-բարիքի, զանազան ուտեստների համտեսով:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

«ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ» ՄԱՅՐՈՒՂԻ

Ճանապարհ, որ տանում է դեպի անկախության ամրապնդում

Սկիզբը էջ 1

Անդրադառնալով այն հարցին, թե ինչո՞ւ ճանապարհի կառուցումը մաս առ մաս է տեղի ունենում, գործադիր տնօրենը պարզաբանեց, որ դա արվել է հյուսիս եւ հարավ ուղղություններում հավասարակշռությունը պահպանելու նպատակով: Շրջանները կենտրոնին կապելը ռազմավարական նշանակություն ունի: Այս առումով անհրաժեշտ է առաջիկայում ճանապարհաշինարարական աշխատանքներն ակտիվացնել Հադրութի շրջանում, որովհետեւ այս շրջանն ըստ էության մեկուսացված է կենտրոնից նույն կերպ, ինչպես, ասենք, ՀՀ-ում Մեղրին:

Երկարության չափով, ավելացրեց հիմնադրամի գործադիր տնօրենը, «Հյուսիս-հարավ» ճանապարհի շահագործված հատվածը կազմում է Գորիս-Ստեփանակերտ մայրուղու կեսը, մինչդեռ այս դեպքում ճանապարհահատվածն ավելի արագ է կառուցվել եւ դարձյալ բարձր որակով: Դա խոսում է այն մասին, որ արցախցի ճանապարհաշինարարներն արդեն բավականին փորձ են ձեռք բերել, վարպետացել իրենց գործում:

Ասկերանի շրջանի Ասպարեզ գյուղի խաչմերուկում շահագործման հանձնված 20 կիլոմետրանոց ճանապարհահատվածի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ հեկտեսօրին: Միջոցառմանը մասնակցում էին ինչպես պետական բարձրաստիճան այրեր, այնպես էլ տասնյակ հյուրեր արտասահմանից, որոնք համակված էին տոնական տրամադրությամբ:

Կարմիր ժապավենը կտրելու պատիվը բաժին ընկավ ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանին եւ Երեւանից ժամանած հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի փոխնախագահ Գագիկ Հարությունյանին:

Նորակառույց ճանապարհը Խաչենի եզրափակիչ հատվածում օրհնեց Արցախյան թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Պարգեւ Մարտիրոսյանը:

Ճանապարհահատվածի հանդիսավոր բացմանը տեղի ունեցավ եւս մի հաճելի արարողություն: Արցախին քանիցս իր բարեգործություններով սատարած Ամերիկայի հայկական համագումարի նախագահ Հրայր Հովնանյանն արժանացավ «Գրիգոր Լուսավորիչ» շքանշանի: Արցախի բարձրագույն պետական պարգեւն անձամբ հանձնեց ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը: «Վաչագան Բարեպաշտի» անվան մեդալ հանձնվեց նաեւ սփյուռքահայ մեր բարեւարներից մեկին՝ Սալի Թուֆենկյանին:

Հաջորդ օրը «Հայաստան» համահայկական հիմնադրամի արցախաշեն ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ ուշագրավ մեկ այլ իրադարձություն. շահագործման հանձնվեց Ասկերանի շրջանի Սղնախ գյուղի ջրատարը, որը կառուցվել էր գերմանահայ համայնքի հանգանակած միջոցներով: Դա Գերմանիայում բնակվող մեր հայրենակիցների ուժերով կառուցված երրորդ կառույցն էր Արցախում:

Ելույթ ունենալով ջրատարի բացմանը, գերմանահայ համայնքի անդամ Ռուբեն Վասիլյանը հաջողություններ մաղթեց սղնախցիներին եւ հույս հայտնեց, որ դա իրենց վերջին բարեգործական ձեռնարկումը չի լինի Արցախում:

Միջոցառմանը մասնակցում էր նաեւ ԼՂՀ վարչապետ Անուշավան Դանիելյանը:

ԵՂԻՇԵ ԱԲՐԱՄՅԱՆ
Ստեփանակերտ

ինտերվիւ-ասուլիս

«Հայաստանի եւ Թուրքիայի երկխոսությունը ժամանակի պահանջն է, բայց...»

Սկիզբը էջ 1

– Եթե կարճ ասեմ, ապա ուսանողները տարբեր են, ինչպես մեր ժամանակ: Ճիշտ է, կան տարբերություններ: Այսօրվա հայկական բուհի ուսանողը տեղաշարժվում է զգալիորեն ավելի հիշ, քան 70-80 թթ. էր: Եվ դա մեր երկրի ներկա սոցիալ-տնտեսական վիճակի հետ կապված բնավ էլ միակ երեւույթը չէ: Այսօրվա հայ ուսանողը մեծ մասամբ գործնապաշտ է, ձգտում է լավ կյանքի, լավ վաստակի եւ աշխատանքի: Ժամանակին մենք վերջին խնդիրը չունեինք: Մի խոսքով, ժամանակակից ուսանողի բոլոր առանձնահատկությունների վրա ժամանակն իր հետքն է թողնում:

– Գտնո՞ւմ եք արդյոք, թե Հայաստանը պետք է Մոսկվայից պահանջի հրաժարվել 1921 թ. մոսկովյան պայմանագրից: Եթե այո, այս հարցում պաշտպանե՞լ եք պարոն Հայրիկյանին (Գրիգոր, Մոսկվա):

– Մենք ճնշադաստաբար ենք վերաբերվում 1921 թ. Մոսկվայի պայմանագրին: Այն հանգամանքը, որ դրա ճնշարկմանը հայկական կողմը փաստորեն չի մասնակցել, այդ իրավաբանական փաստաթուղթը դարձնում է ոչ լիարժեք: Սակայն ժամանակակից շրջանային իրողությունների վրա ազդում են հսկայական թվով հանգամանքներ, այդ թվում 1921 թ. հետո ստորագրված փաստաթղթերը: Գտնում ենք, որ պատմական արդարության հաստատումը պետք է բխի այսօրվա իրավիճակից:

– Ի՞նչ կարծիք ունեք Արկադի Վարդանյանի մասին, եւ նա ինչպիսի՞ հետք է թողել ժողովրդավարության պատմության մեջ: (Վարդան Մկրտչյան, Ավստրալիա)

– Մենք գտնում ենք, որ Ա. Վարդանյանի ելույթները պատմական բնույթ չեն կրում եւ հետաքրքիր են բացառապես նրանով, որ որոշակի թվով մարդիկ փողոց դուրս եկան Վարդանյանի կոչով, որը երկրի քաղաքական շրջանակներում անհայտ էր անկախության առաջին ութ տարիներին:

– Չեզ չի՞ թվում արդյոք, որ Դուք նախագահին եւ նրա վարչակազմը գովաբանում եք հաջորդ ընտրություններում խորհրդարանում հայտնվելու համար: Ժամանակն է գիտակցել Հայաստանում ստեղծված իրավիճակի ողջ լրջությունը եւ կանգնել նոր լիդերի, օրինակ, Արա Աբրահամյանի կողմը: (Արմեն, Մոսկվա)

– Նման մոտեցումը չի համապատասխանում իրականությանը: Մեր պաղլամենտարիզմի պատմությունը ցույց է տալիս, որ նախագահի եւ նրա շրջապատի գովերգումը օրենսդիր իշխանության հասնելու ամենակարճ ուղին չէ: Ի դեպ, այն, ինչը դուք գովեստ եք անվանում, մեր կարծիքով, պետության ղեկավարի գործունեության վերաբերյալ մեր կուսակցության տեսակետն է, որի իրավունքը ունենք ոչ պակաս չափով, քան աջ ու ձախ ցեխարձակմամբ զբաղվողները:

– Ես ԱՄՆ-ում բնակվող ադրբեջանցի եմ: Ինձ համար հետաքրքիր է Ձեր դիրքորոշումը Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցի վերաբերյալ: Չե՞ք գտնում արդյոք, որ խնդիրը պետք է լուծվի միջազգային իրավունքի, այսինքն պետության տարածքային ամբողջականության սկզբունքի հիման վրա: Եվ երկրորդ հարցը. Ձեր վերաբերմունքը այսպես կոչված «Հայոց ցեղասպանության» նկատմամբ, թեեւ հայտնի է, որ այն տարիներին զոհվել է ընդամենը 600 հազար հայ, իսկ հայերի ձեռքով զոհվել են երկուսուկես միլիոնից ավելի մահմեդականներ եւ հրեաներ: Երախտապարտ կլինեմ, եթե պատասխանեք այս հարցերին, բայց, անկեղծ ասած, չեմ հավատում, թե շատ եք հեռացել Ձեր ցեղակիցներից: (Ռիչարդ, ԱՄՆ)

– ԱՄՆ-ում բնակվող պարոն ադրբեջանցի, դուք երկու հարց տվեցիք եւ ինքներդ էլ դրանց պատասխանեցիք: Այնպես որ ասելիք չունեմ մեկին, որը հարց է տալիս եւ ինքն էլ կտրականապես պատասխանում է: Միակ բանը, ինչում իրավացի եք, այն է, որ ես իմ ցեղակիցներից չեմ հեռացել եւ չեմ հեռանա, իսկ Դուք, ինչպես երեւում է, հեռացել եք, նույնիսկ հատել եք օվկիանոսը:

– Ինչպե՞ս եք վերաբերվում ձեր կուսակցության անվերջանալի վերափոխումներին: (Նիկողոսյան Արամ, Մոսկվա)

– Մեզ հայտնի չեն 1921 թ. կազմավորումից հետո մեր կուսակցության լուրջ վերափոխումներ: Մենք եղել եւ մնում ենք ռամկավար-ազատական գաղափարախոսության կողմնակիցներ, հայերի 1915 թ. ցեղասպանության միջազգային ճանաչման, ազգային կարեւորագույն խնդիրների արդարացի լուծման ջատագովներ:

– Թե՛ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, եւ թե՛ արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար Վարդան Օսկանյանը քանիցս հայտարարել են, որ հարկավոր է փոխզիջում գտնել Ղարաբաղի հակամարտության կարգավորման համար: Կոնկրետ ի՞նչ զիջումների է պատրաստ դիմելու Հայաստանը: (Ռուբեն Մամեդով, Բոստոն)

– Հայաստանի քաղաքական ղեկավարությունը գիտակցում է Ղարաբաղի հարցի կարգավորման մեջ փոխզիջումների անհրաժեշտությունը: Դրա հետ մեկտեղ գոյություն ունեն երեք կարեւորագույն սկզբունքներ, որոնց կատարումը կստեղծի բանակցություններում արդյունքների հասնելու հնարավորություն. 1. ԼՂՀ կարգավիճակը ըստ Լեռնային Ղարաբաղի բնակչության ինքնորոշման սկզբունքի եւ ներկա իրողությունների, 2. Հայաստանը եւ ԼՂՀ-ն միացնող միջանցքի գոյությունը, 3. Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության պահպանումը:

– Չնայած եվրախորհրդի հայտարարությանը, ինքնահռչակ ԼՂՀ-ի իշխանությունները անցկացնում են ինքնակառավարման մարմինների ընտրություններ, իսկ Վարդան Օսկանյանը հայտարարում է, թե դրանք որեւէ կապ չունեն Ղարաբաղի հակամարտության կարգավորման հետ: Չե՞ք գտնում արդյոք, որ դա պարզապես եվրախորհրդի կարծիքի անտեսում է: (Ռուբեն Մամեդով, Բոստոն)

– Հայաստանի Հանրապետության արտգործնախարարի կարծիքը համընկնում է համաշխարհային հասարակայնության կարծիքին: Դրա փայլուն օրինակն այս առումով պատշաճական Վաշինգտոնի արտահայտած տեսակետն է (նույն ընտրությունների վերաբերյալ):

– Ինչպե՞ս եք վերաբերվում վերջերս ստեղծված «Հաշտեցման» հանձնաժողովին եւ դրա կազմին: (Արմեն, Երեւան)

– Այսպես կոչված Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովը չի արտահայտում Հայաստանի Հանրապետության հասարակության եւ սփյուռքի կարեւորագույն հասարակաքաղաքական կազմակերպությունների կարծիքը: Հետեւաբար, հայության համար այդ հանձնաժողովը հեղինակավոր եւ հեռանկարային չէ:

– Դուք մեզ չե՞ք սպասում Երեւանում: Դա ձեր վրա թանկ կնստի: Ոչ միայն Ղարաբաղում, այլեւ Երեւանում: (Շավանշիր, Բոստոն)

– ... Առանց մեկնաբանության:

– Ասացեք խնդրեմ, այսօր Ձեր կարծիքով ի՞նչն է առաջնահերթ հայ ժողովրդի նպատակների իրականացման եւ բարեկեցության ապահովման համար. հայերի համախմբո՞ւմը, թե՞ մյուս երկրների (Ռուսաստան, ԱՄՆ, Իրան, Թուրքիա եւ այլն) օգնությունն ու աջակցությունը: Կարո՞ղ է երբեք միլիոնանոց (իրականում կիսով չափ պակաս) եւ 150-ից ավելի անհատ «կուսակցություններ» ունեցող երկիրը հասնել տնտեսական եւ միջազգային քաղաքական հաջողությունների: (Լեւոն Գրիգորյան, Մոսկվա)

– Նախ՝ Հայաստանում իրականում գործունյա է 12-13 կուսակցություն: Դա եւս փոքր թիվ չէ երեք միլիոնանոց երկրի համար (կարծում եմ, այժմ բնակչությունը զգալիորեն պակաս է): Բայց, մեր կարծիքով, հայ ժողովրդի խնդիրներն այս փաստով չեն բացատրվում: Մեր կարծիքով, իշխանության արդյունավետ ինստիտուտով քաղաքակիրթ քաղաքական համակարգի ստեղծումը եւ գործունակ քաղաքական միավորների առկայությունը անպայման կնպաստեն տնտեսական խնդիրների լուծմանը: Բայց նման քաղաքական համակարգի գոյությունը, որպես կանոն, տնտեսական փոխակերպումների արդյունքն է եւ ոչ թե հակառակը:

– Ինչպե՞ս եք վերաբերվում վարչապետի անձին: Ժամանակը չէ՞, որ նա հրաժարական տա: Մեր ժողովուրդն ունի բազմաթիվ լավ տնտեսագետ-ֆինանսիստներ, որոնք աշխատում են արտասահմանում: Չեզ չի՞թվում, որ նրանք կկարողանան երկրի տնտեսությունը բարձրացնել պատշաճ մակարդակի: (Արթուր, Մոսկվա)

– Ներկայիս վարչապետը եւ նրա կաբինետը արտացոլում են խորհրդարանական մեծամասնությունը: Ի դեպ, այդպես էլ պետք է լինի: Իսկ թե ինչու ունենք նման խորհրդարանական մեծամասնություն, կարծում եմ, առավել լուրջ եւ կարեւոր հարց է: Այնպես որ վարչապետին վերաբերող խոսակցությունը կապ ունի հետեւանքների հետ, մինչդեռ պատճառն ուրիշ տեղ է:

– Ո՞րն է Ղարաբաղի խնդրի լուծման Ձեր ընկալումը: Որքանո՞վ է հնարավոր ռազմական ուղին: Պատասխանելիս խնդրում եմ հաշվի առնել, որ ես Ադրբեջանից եմ: (Նաիր, Ադրբեջան)

– Տվյալ հարցում մենք պատշաճում ենք պատշաճական երեւանի տեսակետը:

– Ինչպիսի՞ տնտեսական վնաս պատճառվեց Հայաստանին, նա ի՞նչ ձեռք բերեց եւ ինչի՞ց զրկվեց պատերազմ սանձազերծելով Ադրբեջանի դեմ (տնտեսական տեսակետից): (Ֆարիդ, Բոստոն)

– Ամեն մի պատերազմ մասնակից երկրներին տնտեսական վնաս է պատճառում: Կարծում եմ, Հայաստանի եւ Ադրբեջանի ռազմական հակամարտությունը բացառություն չէ: Բայց վերջին հաշվով տվյալ հարցը օգուտների եւ վնասների տեսակետից դիտարկելը համարում եմ ոչ պատշաճ: Չէ որ առճակատման հետեւանքով երկու կողմերն էլ ունեն մարդկային բազմաթիվ զոհեր եւ մեծ թվով գաղթականներ:

– Ինչպե՞ս եք գնահատում Թուրքիայի եւ Հայաստանի երկխոսությունը: Վերջ ի վերջո, Հայաստանը դատապարտված է Թուրքիայի հետ երկխոսության: Ի՞նչ զիջումների կարող է դիմել Հայաստանը: Ուզո՞ւմ եք Թուրքիայի հետ հաստատել բարեկամական հարաբերություններ: Հարգանքներով՝ Էնվեր (Թուրքիա)

– Մեր կուսակցության ղեկավարության պատշաճական հայտարարության մեջ, որը հրապարակվել է նաեւ «Ազգ» թերթում, միանշանակ ասված է, որ Հայաստանի եւ Թուրքիայի երկխոսությունը ժամանակի պահանջն է: Դրա հետ մեկտեղ, վերջերս ստեղծված այսպես կոչված Հայ-թուրքական խաղաղ երկխոսության հասարակական հանձնաժողովը, մեր կարծիքով, չի կարող արդյունավետ լինել: Հայկական պետությունը ներկայացնում են երկու հիշականներ, որոնք բնավ չեն արտահայտում Հայաստանի հասարակայնության կարծիքը: Նրանց անդամությունը, ինչպես նաեւ սփյուռքի ոչ լիարժեք մասնակցությունը անհեռանկար են դարձնում տվյալ հանձնաժողովի որոշումներն ու հանձնարարականները:

– Ի՞նչ փոխզիջումների է պատրաստ հայկական կողմը Ղարաբաղի խնդրի կարգավորման խաղաղ բանակցություններում: Եվ երկրորդ՝ Հայաստանը հրաժարվում է խոստովանել Ադրբեջանի տարածքի օկուպացումը, մինչդեռ օկուպացված Ղարաբաղի հայերը հայկական անձնագրեր ունեն: Ո՞ր փուլում «Հայաստանին միանալու» խնդիրը վերածվեց «անկախության հռչակման» խնդրի: (Խալիջա Իսմայլովա, Բոստոն)

– Կարծում եմ, խաղաղ կարգավորման հարցը պետք է դիտարկվի համալիր կերպով եւ ոչ թե առանձին կողմերով: Ինչ վերաբերում է հարցի վերջնամասին, մեր կարծիքով, փոխակերպումը տեղի է ունեցել այն ժամանակահատվածում, երբ երկկողմ հակամարտության մեջ ներքաշվեցին ուրիշ երկրներ:

– Կարգավորումը պետք է բացառապես խաղաղ լինի: Բայց կա էական տարբերություն: Մենք՝ ադրբեջանցիներս, ղեկավարվում ենք սահմանների անխախտելիության սկզբունքով: Ինչ վերաբերում է ինքնորոշման իրավունքին, Ադրբեջանի քաղաքացիությունը մերժող հայերին ոչ ոք չի խանգարում մեկնել Հայաստան: Եվ եթե հայերն ուզեն օգտվել այդ իրավունքից, ապա ինչո՞ւ ինքնորոշման նույն իրավունքից (տվյալ դեպքում Ադրբեջանի քաղաքացի մնալու իրավունքից) չեն կարող օգտվել պատերազմից առաջ Լեռնային Ղարաբաղում ապրած եւ այսօր փախստական դարձած ադրբեջանցիները: (Խ. Իսմայլովա, Բոստոն)

– Մենք կարծում ենք, որ տարրական ժողովրդավարական նորմերը ոտնահարող, վերից վար կաբառակերության մեջ քաղված երկիրը, որը չունի եւ առաջիկա տասնամյակներում չի ունենա մարտունակ բանակ, պետք է զգալիորեն համեստ հավակնություններ ունենա եւ բարոյախոսական քարոզներ չկարդա ուրիշներին: Հաշտության բանակցությունները հնարավոր են միայն այսօրվա իրողությունների լիակատար գիտակցման դեպքում: Իսկ այդ իրողությունները սրանք են. 1. ԼՂՀ-ն պետական կազմավորում է՝ իշխանության ձեւավորված ժողովրդավարական կառույցներով, որոնք Ադրբեջանն առ այսօր չունի: Այդ են վկայում սեպտեմբերի 5-ին ԼՂՀ-ում անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները: 2. ԼՂՀ-ի բանակը ագրեսիվ ինչ-ինչ դրսեւորումների զսպման շրջանային գործոն է:

– Հարգելի պարոն Միրզախանյան, խնդրում եմ պարզաբանել ձեր կուսակցության հարաբերությունների մակարդակը Լիբանանի գործընկերների եւ կուսակցության համաշխարհային բյուրոյի հետ: Ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի ներքաղաքական իրավիճակը, ձեր կուսակցության վերաբերմունքը ՀՅԴ-ի հանդեպ: (Լեոնիդ Բակունց, Բեյրութ)

– Մենք գտնում ենք, որ ս. թ. ապրիլին Աթենքում կայացած ՌԱԿ համագումարը աշխարհի տարբեր երկրներում մեր կազմակերպության առավել արդասավոր գործունեության հնարավորություն ստեղծեց: Ինչպես հայտնի է, այդ համագումարում ՌԱԿ-ը միասնական դարձրեց իր գործունեությունը: Այդ համաժողովում նաեւ սահմանվեց ՌԱԿ-ի եւ ՀՌԱԿ-ի փոխհարաբերությունների սկզբունքը: ՀՌԱԿ Հանրապետական վարչությունը սփյուռքի կազմակերպությունների հետ փոխհարաբերությունների հարցերը համաձայնեցնում է կենտրոնական վարչության հետ: Իսկ ՌԱԿ Կենտրոնական վարչությունը Հայաստանին առնչվող հարցերը կարգավորում է Հանրապետական վարչության հետ:

– Ինչպե՞ս եք վերաբերվում բուրժուականությանը: Հայաստանում հայտնվե՞լ է արդյոք դասական հայ ազգային բուրժուա եւ ինչպիսի՞ն է նա: (Կոլյա Օստենբակեն, Երեւան)

– Մեր բուրժուան կազմավորման փուլում է: Արտաքուստ նա գուցե երբեմն ծիծաղելի է, ոչ այնքան դուրեկան, որքան կուզենայիք: Հավատացեք, դա ժամանակի հարց է: Մեր երկրի ապագան շուկայական հարաբերությունների իրական արմատավորումն է: Ժամանակակից բուրժուաների խավը, հուսով ենք, նույնպես դրական փոխակերպումների կենթարկվի:

– www. genocide. ru էլեկտրոնային էջը ձեր հերթական քարոզչական աշխատանքն է: (Այդին, Մոսկվա)

– www. genocide. ru-ն մեր հերթական քարոզչական աշխատանքը չէ:

– Մի՞թե Հայաստանն ու Թուրքիան դատապարտված են մշտապես թշնամիներ լինելու: Իմ կարծիքով, մենք պետք է նայենք ապագային, եւ թեեւ փնտրենք մեր հարաբերությունների բարելավման համար եւ չլինենք մեծ տերությունների քաղաքական խաղերի առարկաներ: (Էնվերչան, Թուրքիա)

– Հուսով եմ, դատապարտվածություն չկա: Կարծում եմ, ներկա հարյուրամյակը Թուրքիային կդարձնի այնքան ուժեղ եւ անկախ երկիր, որ նա կկարողանա իրատեսորեն գնահատել սեփական անցյալը եւ ընդունել Հայոց ցեղասպանությունը:

– Ինչո՞ւ է ձեր ամսական եկամուտը դրամով: (Կիրակոս, ԱՄՆ)

– Որքան գիտեմ, ձեր երկրում նման հարցը պարկեշտ չի համարվում, եթե հարցնողը հարկային տեսուչ չէ: Սակայն կպատասխանեմ, որ իմ վաստակն ինձ եւ ընտանիքիս թույլ է տալիս Հայաստանի պայմաններում համարվել միջին խավ:

– Պարոն Միրզախանյան, հիշում եմ, թե ձեր կուսակցությունն ինչպիսի մեծ խանդավառությամբ էր պատշաճում Լեւոն Տեր-Պետրոսյանի վարչակարգը: Իշխանությունների հանդեպ իր վերաբերմունքով ձեր կուսակցությունը նույնիսկ ավելի օրինապահ էր թվում, քան կառավարող ՀՀՇ-ն: Չե՞ք գտնում արդյոք, որ այդ վարչակարգը պատշաճած բոլոր կուսակցություններն ու խմբերը քրիստոնեության ընդունման 1700-ամյակի առթիվ պետք է ապաշխարեն ոչ միայն հայ ժողովրդի, այլեւ Տեր Աստծո առջեւ: (Կոլյա Օստենբակեն, աշխարհաքաղաքացի)

– Առավել անհեթեթ պնդում դժվար է պատկերացնել: Մի՞թե այդ պատշաճանության արտահայտությունն էին 1996 թ. Տեր-Պետրոսյանի վարչակարգի կողմից **«Ազգ»** թերթի փակումը կամ 1993 թ. ապրիլի 2-ին իմ ձերբակալությունը, կամ բռնության քայլերը **«Ազգ»** թերթի գլխավոր խմբագրի նկատմամբ եւ մեր կուսակցության ներկայացուցիչների պատշաճանկությունը: Գուցե ընթերցողը գտնում է, թե ՀՌԱԿ-ի եւ պետության նախկին ղեկավարի հիանալի փոխհարաբերությունների վկայությունը կուսակցության պառակտման բազմաթիվ փորձե՞ր էին, որոնք նույնպես իրականացվում էին Տեր-Պետրոսյանի եւ իր շրջապատի կողմից: Խորհուրդ ենք տալիս նման պնդումներ անելուց առաջ գոնե ընթերցել 1990-1996 թթ. մամուլը:

– Դուք մասնական շարժման անդա՞մ եք: (Պետրոս Օհանյան, Ամերիկա)

– Ոչ:

– Ուստիր ծանոթացա հայ-թուրքական հարաբերությունների ձեր ընկալմանը: Եթե (Ասված մի արասցե) ձեր հարեւանը սպանի ձեր որդուն, կհաստատե՞ք նրա հետ որեւէ կարգի հարաբերություններ, բացի դատականից: Լիովին համամիտ եմ հարգարժան պրոֆեսոր Էդուարդ Հովհաննիսյանի հետ. քանի դեռ Թուրքիան պատշաճապես չի ճանաչել հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը, ներողություն չի խնդրել եւ փոխհատուցման պարտավորություն չի ստանձնել, Թուրքիայի հետ քաղաքական, տնտեսական, մշակութային հարաբերությունները միանգամայն վնասակար կլինեն Հայաստանի համար: (Արամազդ, Ամերիկա)

– Շարունակեք հիանալ պրոֆեսոր Հովհաննիսյանով:

Աֆղանստանի հարցում ԱՄՆ-ը սկսել է երկմտել

Պատճառը դաշնակիցներից ոմանց ներքին հակասություններն են

Նախագահ Ջորջ Բուշի՝ ԱՄՆ-ի զինված ուժերին ուղղված «պատրաստ լինելու» կոչի համաձայն, վերջիններս շարունակում են պատրաստվել Աֆղանստանի դեմ պատերազմին: Այդ ընթացքում պաշտոնական Վաշինգտոնը շարունակում է դաշնակիցներ որոնել: Ըստ երևույթին, Աֆղանստանի դեմ ռազմական գործողությունների իրագործումը պայմանավորված է որոնման արդյունքներով, որոնք այնքան էլ գոհացուցիչ չեն: Խոսքը տվյալ դեպքում վերաբերում է Մ. Նահանգների այն դաշնակիցներին, որոնք անմիջականորեն կմասնակցեն ցամաքային գործողություններին: Ակամա հարց է ծագում՝ հանուն ինչի՞: Այդ հարցի պատասխանը միանշանակ է՝ հանուն հավելյալ բշնամիներ ձեռք բերելու: Քանի որ դաշնակիցների առումների թիրախը: Մինչդեռ Թուրքիան, հանձին վարչապետ Էջեւիթի, պաշտոնական նամակով մերժել էր ռազմական գործողություններին զենքով եւ զորքով մասնակցելու ԱՄՆ-ի պահանջը: Ուրեմն, ԱՄՆ-ի հետ ռազմաքաղաքական դաշինքը որքան էլ պարտավորեցնող լինի Պակիստանի եւ Թուրքիայի համար, հակազդեցության ներքին եւ արտաքին դրսեւորումները վերջիններիս նախազգուշացնում են, ինչը թույլ չի տալիս, որ Վաշինգտոնը նրանց ներքաշի պատերազմի մեջ:

Հարցը, սակայն, սոսկ իսլամական աշխարհը չէ, այլ տարածաշրջանի ազդեցիկ պետություններից Իրանի, Հնդկաստանի եւ Չինաստանի հավանական հակազդեցությունը, որը Պակիստանի եւ Թուրքիայի իշխանությունների համար աֆղանական առաջիկա պատերազմը դարձնում է ավելի մտահոգիչ, քան հավելյալ բշնամիների ձեռքբերումը: Թերեւս այդ առումով պատահական չեն հակաաֆղանականի փոխարեն «հակաթալիբյան կոալիցիայի» ձեւավորման Վաշինգտոնի վերջին միտումներն ու դաշնակիցների ձեռքբերման առումով նրա որոնումների կենտրոնացումը «Հյուսիսային դաշինքի» վրա:

Նկատի ունենալով Ուսամա բեն Լադենին եւ թալիբներին «Հյուսիսային դաշինքի» մաս կազմող ուժերի դեմ տարիներ շարունակ օգտագործելու պարագան, թվում է, թե Աֆղանստանում «հակաթալիբյան կոալիցիայի» ձեւավորումը եւս չի կարող հեռանկարային լինել ԱՄՆ-ի համար: «Հյուսիսային դաշինքը», քաջ իմանալով ԱՄՆ-ի նկրտումները, նրան եթե ոչ բշնամանքով, ապա ակնհայտ կասկածամտությամբ է վերաբերվում: Կասկածանքի առումով միանգամայն հասկանալի եւ վերոհիշյալ դաշինքի ներկայացուցչի հետեւյալ խոսքերը. «Մենք պատրաստ ենք անուղղակիորեն աջակցել ամերիկացիներին, պայմանով, որ վերջիններս երկրում թալիբների իշխանության տապալումից հետո հանեն Աֆղանստանից: Աֆղանական ժողովուրդն ինքն է իր ճակատագիրը որոշում: Եթե ամերիկացիները փորձեն խոչընդոտել, ապա մենք մեր զենքը կուղղենք նրանց դեմ»:

ԱՄՆ-ի նկատմամբ «Հյուսիսային դաշինքի» վերոհիշյալ կասկածամտությունը միանգամայն հասկանալի է, իսկ զենքը ամերիկացիների դեմ ուղղելու պատրաստակամությունը՝ տրամաբանական: Թերեւս դա համապատասխանում է Աֆղանստանում ԱՄՆ-ի երկարաժամկետ ներկայությունը բացառելու Իրանի, Հնդկաստանի եւ Չինաստանի տրամադրություններին: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա նա սկսած 1993-ից ընդդեմ թալիբների զենքով եւ զինամթերքով օգնում է «Հյուսիսային դաշինքին»: Օրերս Գերմանիայում ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը նշեց, որ իր երկիրը զենք եւ զինամթերք է մատակարարելու Դաշինքի ուժերին:

Սա Դաշինքի վրա Ռուսաստանի քաղաքական ազդեցության վկայությունն է: Թերեւս Աֆղանստանի վարանդի թագավոր Մոհամադ Զահիր Շահի հետ ԱՄՆ-ի բանակցությունները, առավել եւս թալիբների իշխանության տապալումից հետո հայրենիք վերադառնալու եւ երկրի կառավարման պատասխանատվությունն ստանձնելու ամերիկյան առաջարկները պայմանավորված են թե՛ Դաշինքի ուժերին սեփական նախաձեռնությամբ համախմբելու, եւ թե՛ ռուսական ազդեցությունը թուլացնելու Վաշինգտոնի քաղաքական հաշվարկներով: Կարդարանա՞ն ԱՄՆ-ի այս հաշվարկները, ցույց կտա Աֆղանստանում նախատեսվող ռազմական գործողությունների ընթացքը: Բայց որ «հակաթալիբյան կոալիցիան» դեռ չձեւավորված, թալիբներին հաջողվում է հակաամերիկյան կոալիցիա ձեւավորել եւ դրա մեջ ներգրավել ԱՄՆ-ին դաշնակից այնպիսի երկրների ժողովուրդներին, ինչպիսիք են Պակիստանն ու Ինդոնեզիան, որեւէ կասկածի տեղիք չի տալիս: Ընդ որում, ԱՄՆ-ի յուրաքանչյուր քայլին թալիբները պատասխանում են համարժեք քայլերով: Ավելին, հենց նրանց հակաքայլերն են արժանանում դրական արձագանքի: Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ նախագահ Բուշի կոչին, որը սեպտեմբերի 26-ին հասցեագրվել էր աֆղան ժողովրդին: Բուշը աֆղանցիներից պահանջում էր ապստամբել թալիբների դեմ: Պահանջն արձագանք չգտավ, բայց Ուսամա բեն Լադենի կոչին արձագանքեց Պակիստանի ազգային պաշտպանությունը: Ինչպես նաեւ Լադենի հնարավորությունները թույլ կտան նրան կազմակերպել այդպիսի լայնածավալ գործողություններ»: Դրան հետեւեց բեն Լադենի «Ալ Ղաիդա» կազմակերպության՝ կատարված ահաբեկչության համար ամերիկյան համակարգին եւ հրեական կառույցներին մեղադրող հայտարարությունը: Կազմակերպության ռազմական թեւի պատասխանատու Մոջահիդը սպառնաց. «Եթե ԱՄՆ-ը հարձակվի մեզ վրա, ապա աշխարհը կհեղեղենք արյունով»:

Սեպտեմբերի 27-ին նույն մոլլա Օմարն անլուրջ համարելով ԱՄՆ-ի սպառնալիքները, վստահաբար հայտարարեց, որ ամերիկացիները չեն համարձակվի հարձակվել Աֆղանստանի վրա: Նա, այնուամենայնիվ, ավելացրեց. «ԱՄՆ-ը գերհզոր տերություն է, բայց պատերազմը մենք ենք շահելու»: Օմարի այս հայտարարությունն էլ իր արձագանքը գտավ Պակիստանում եւ Ինդոնեզիայում: Երբ իսլամականները կարաչիում ցրում էին հզոր իշխանությունների կազմակերպած ցույցը, ապա Ջակարտայում ցուցարարները բուռն ելույթներից հետո շարժվում էին դեպի ԱՄՆ-ի դեսպանատուն եւ սպառնում, որ Աֆղանստանի վրա հարձակման դեպքում գրավելու են շենքը:

Նախագահ Բուշը, թուրքական «Միլիեթ»-ի վկայությամբ, անելանելի վիճակում է հայտնվել: Առանց հակաաֆղանական կոալիցիան ձեւավորելու եւ հակաթալիբյան ուժերին ամերիկյան նախաձեռնությամբ ընդդեմ թալիբներին միավորելու Աֆղանստանի վրա հարձակման դեպքում ԱՄՆ-ը խրվելու է ճահիճը: Հարձակումից հրաժարվելու պարագայում նա կորցնելու է ոչ միայն ամերիկացիների աջակցությունը, այլեւ կասկածի տակ է դնելու պաշտոնական Վաշինգտոնի միջազգային հեղինակությունը: Նրա անելանելի վիճակը պայմանավորված է այն երկընտրանքով, որի մեջ նա հայտնվեց իր ռազմատենչ եւ անհավասարակշիռ հայտարարություններով: Ուրեմն, նա որքան էլ հրաժարվի «աշխարհը դեպի հաղթանակ առաջնորդելու» ձգտումներից, չի կարող հրաժարվել ամերիկյան հասարակական կարծիքի առջեւ իր իսկ հայտարարությունների պատասխանատվությունից:

ՀԱԿՈԲ ՉԱՔԲԱՏՅԱՆ

Հակաամերիկյան ցույց Պակիստանում

ՄԱԿ-ի ԱԽ-ն միաձայն ընդունեց հակաահաբեկչական բանաձեւ

Մնում է պարզել «ահաբեկչություն» տերմինի սահմանները եւ ով է ահաբեկիչ

Անցող ուրբաթ ուշ երեկոյան ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը (ԱԽ) միաձայն ընդունեց ԱՄՆ-ի առաջ քաշած հակաահաբեկչական բանաձեւը, որը ՄԱԿ-ի անդամ 189 պետություններին պարտավորեցնում է դադարեցնել «ահաբեկիչներին ֆինանսավորելը, վարժեցնելը, տանիք տալը»: Այն պետության դեմ, որը չի կատարի հակաահաբեկչական բանաձեւի պայմանները, ՄԱԿ-ի ԱԽ-ն կարող է պատժամիջոցներ, ներառյալ ուժ կիրառել: Ըստ Անվտանգության խորհրդի (15 պետություններ, որից 5-ը մշտական անդամներ՝ ԱՄՆ, Ռուսաստան, Չինաստան, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա) ընդունած բանաձեւի, ՄԱԿ-ի անդամ 189 պետությունները պարտավոր են կանխել եւ դադարեցնել ահաբեկիչների ֆինանսավորումը, անհապաղ սառեցնել ահաբեկիչների եւ ահաբեկչական կազմակերպությունների ֆինանսական աղբյուրները, դադարեցնել ահաբեկչական կազմակերպություններում նոր անդամների հավաքագրումը եւ կանխել նրանց զենքի մատակարարման ճանապարհը, հրաժարվել ապաստան տալուց նրանց, ովքեր ֆինանսավորում, նախագծում, աջակցում կամ իրականացնում են ահաբեկչական գործողությունները, միմյանց օժանդակել այն հետաքննությունների դեպքում, որոնք վերաբերում են ահաբեկչությանը, կանխել ահաբեկիչների կամ ահաբեկչական խմբերի տեղաշարժը՝ ուժեղացնելով սահմանային անցումների վերահսկողությունը: Բանաձեւը բոլոր 189 պետություններին հորդորում է 90 օրվա ընթացքում ՄԱԿ ներկայացնել հաշվետվություն, թե ինչպես են իրականացվում վերոշարադրյալ կետերն իրենց պետություններում:

Ուրբաթ երեկոյան Անվտանգության խորհուրդը 14 կողմ, 1 դեմ քվեներով վերացրեց Սուդանի նկատմամբ 1996 թ. ընդունած պատժամիջոցները: Բնականաբար, դեմ քվեարկեց միայն ԱՄՆ-ը, որը Սուդանին, ինչպես այլ վեց պետությունների՝ Իրաք, Իրան, Սիրիա, Լիբիա, Կուբա, Հյուս. Կորեա, համարում է ահաբեկչությունը պետականորեն հովանավորող երկրներ, ինչը կողմնակալ է եւ ունի վերանայման կարիք: Նույն 1996 թ. ՄԱԿ-ի ԱԽ-ից առանձին ԱՄՆ-ը պատժամիջոցներ է կիրառում Սուդանի նկատմամբ, որոնք շարունակում են մնալ ուժի մեջ:

ՄԱԿ-ի ԱԽ ընդունած բանաձեւը, անշուշտ, չափազանց կարեւոր է եւ ցույց է տալիս, հատկապես միաձայն ընդունելու դեպքում, աշխարհի պետությունների միասնական վերաբերմունքը, տվյալ պարագայում՝ միջազգային ահաբեկչությունն արմատախիլ անելու անհրաժեշտությունը: Մնում է պարզել ամենակարեւորն ու ամենադժվարը, խիստ վիճարկելին՝ «ահաբեկչություն» տերմինի սահմանները եւ ով է ահաբեկիչ: Հոկտեմբերի 1-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան լիագումար նիստում քննարկում է միջազգային ահաբեկչությունը վերացնելու միջոցառումները: Սպասվում է, որ յուրաքանչյուր երկիր փորձելու է «ահաբեկչություն» հասկացությունը հարմարեցնել իր պատկերացումներին եւ շահերին: Ադրբեջանը, որի ներկայացուցիչը ելույթ է ունենալու 134-րդը, հասկանալի է, թե ինչ է ասելու: Հայաստանի ներկայացուցիչը՝ 142-րդն է:

Դժվար է ասել՝ ԱՄՆ-ը, ՄԱԿ-ից նման բարոյական եւ հոգեբանական աջակցություն ստանալով, շարունակելո՞ւ է իր արհամարհական վերաբերմունքը ՄԱԿ-ի նկատմամբ, թե՞՝ ահաբեկչության դեմ պայքարելու եւ այլ գլոբալ հարցերում (օրինակ՝ Կիոտոյի համաձայնագիրը) համագործակցելու է եւ հաշվի է առնելու այլ պետությունների կարծիքը, շահերը: ՄԱԿ-ի կենտրոնակայանում այն կարծիքն է տիրում, որ սեպտեմբերի 11-ը սիրելու է Վաշինգտոնին կակղեցնել իր դիրքորոշումները, ասել է թե՝ ամբարտավան կեցվածքը մյուս ազգությունների եւ պետությունների հանդեպ: «Արդյոք ՄԱԿ-ում բարեփոխումներ անելու ժամանակը չէ՞, չե՞ք կարծում, որ մենք բոլորս ԱՄՆ-ի պատանդն ենք»՝ հարցով **«Ազգը»** դիմեց ՄԱԿ-ի պաշտոնյաներից բրիտանացի էդվարդ Մորթիմերին: Պատասխանը շատ կարճ էր եւ հստակ. «Մենք իրականության պատանդն ենք»: Ուրեմն՝ կեցցե գերությունը, քանի դեռ այսպիսին է իրականությունը:

Համենայն դեպս, ԱՄՆ-ի վարվելաձեւում փոփոխություններ նկատվում են: Ամերիկյան ՁԼՄ-ները գրում են, որ Աֆղանստանի տարածքում գործող շուրջ 50 «Ալ Ղաիդայի» ճամբարներում կան չեչենցիներ: Ինչպես նշել ենք «Ազգի» նախորդ համարներից մեկում, Չեչնիայի հարցում Վաշինգտոնը փոխել է շեշտադրումները եւ չեչենցիներին անվանում է անջատողականներ (ճիշտ է, ԱՄՆ ՁԼՄ-ները շարունակում են գործածել «rebel»՝ ապստամբ բառը- Թ. Հ.):

Ակնհայտ է, որ ԱՄՆ-ը պատերազմ է սկսելու Թալիբանի, ավելի ճիշտ՝ բեն Լադենի «Ալ Ղաիդա» ահաբեկչական կազմակերպության դեմ, որը բջիջներ ունի (ըստ ամերիկյան գաղտնի ծառայությունների տվյալների) 34 պետություններում, այդ թվում Ադրբեջանում, Վրաստանում, Թուրքիայում: Անշուշտ, սա չի նշանակում, թե ԱՄՆ-ը ռմբահարելու է Վրաստանը կամ Ադրբեջանը, առավել եւս՝ Թուրքիան, որի տարածքում գտնվող Ինջիրլիք ռազմակայանը կենսական նշանակություն ունի Վաշինգտոնի համար:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Նյու Յորք

ՄԱԿ-ի կենտրոնական

մշակույթ

Հակասությունների միասնությո՞ւն

Վարդան Պետրոսյանի նոր ներկայացումը

Հայտնի է, որ 1700-ամյակին նվիրված միջոցառումների ծրագրում ընդգրկված է Ռ. Օսեյնի «Հիսուս է նրա անունը» ներկայացումը: Քիչ հավանական է թվում, որ այն կարող է իրականանալ: Բայց ահա հունիս ամսին հայտնի դարձավ, որ հայ եւ օտարազգի դերասանների մասնակցությամբ բեմադրվում են «Հիսուս է նրա անունը» (որոշակի հատվածներով) եւ Վարդան Պետրոսյանի բեմ Օսեյնը թույլատրել է իր ներկայացումը խաղալ, եթե հնարավորություն կար աշխարհի տարբեր ծայրերից դերասաններ հրավիրել, արդա ինչո՞ւ չներկայացնել ամբողջությամբ: Կդահանջվեր մեծ բեմ, որովհետեւ այս ներկայացումից երեւում է, որ դիտը նախատեսված է մեծ բեմի համար, կմնեներ 1700-ամյակի միջոցառումների ծրագրի մեջ եւ աստվածաշնչյան դատության բեմականացման հաղորդ լինելով (այս ձեւի մոտեցմամբ) գուցե շատ բաների շուրջ շատ ավելի խոր կմտորեմ: Նյութը եւ թեման, ինչին դիմել է Վարդան Պետրոսյանը, հարուստ շերտեր ունի, եւ լայն հնարավորություն է ընձեռվում ստեղծագործելու: Այն, ինչ որ ներկայացվեց, իսկապես վարպետությամբ է կատարվում, բայց ես կասեի՝ այս խաղի որոշ շերտերի ու երեւույթների կողքով է անցնում, ինչին Վարդան Պետրոսյանի նման զգայուն ու ճկուն ստեղծագործողը չէր կարող չարձագանքել:

Նախ այն, որ այս խաղն առաջին հերթին արդիականացվել է լայն ու մեծ բացված գրկաններ, ինքնաթիռներին հառած մեծ-մեծ աչքեր, հյուրանոցների բակերում մշտապես հերթապահող մուրացկաններ: Հրավերներ դրսի մարդկանց, որոնցից պահանջվում է առաջնահերթ «շաբաթային» տրամադրություն, իսկ ներսի մարդկանց՝ «թամադայինն» տրամադրություն, մնացածը՝ «խավորի վրա»: Եթե դարեր շարունակ աշխարհին զարմացրել ենք Նարեկացիով ու Քուչակով, հիմա արդեն առաջին քրիստոնյա ազգ լինելո՞վ ու դուդուկո՞վ: Վերջինիս Վարդանը վարպետորեն անդրադարձավ:

Վարդան Պետրոսյանն ինչպիսի կերպար էլ ստեղծի, հանդիսատեսի համակրանքը մնում է նրա կողմը, սիրում է, խղճում, չարանում, բայց միեւնույն է, փորձում է հասկանալ ու մի քիչ էլ հույս ունենալ: Դերասան Վարդան Պետրոսյանը զարմացրել է ու շարունակում է իր արվեստով զարմացնել: Երբ տեսնում եմ նրան բեմում, մտածում եմ՝ որտեղի՞ց այսքան եռանդ: Նա երկու ժամ շարունակ հանդիսատեսին պահում է լարված, փայլուն անցումներ է անում մի վիճակից մյուսը, մի դերասանական ամպուլայից մյուսը: Մի որեւէ ժանրի մեջ նրան տեղավորել դժվար է: Եվ ողբերգականը եւ կոմիկականը խտացված են մի ներկայացման մեջ: Ինչպես ինքը՝ դերասանը մի գրույցի ժամանակ խոստովանեց՝ դրամատիկ ժանրի հետ հարազատությունը քիչ է: Վարդան Պետրոսյանը հաղթանակներ շատ է ունեցել: Եվ եթե այս միացված ներկայացման մեջ նա շատ փոքր քայլով ինքն իրեն զիջում է, միեւնույնն, սպասում ենք նրա նոր հաղթանակներին:

ԱՆԺԵԼԱ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՆՈՐ ՖԻԼՄ

Մեծահասակների աշխարհը՝ երիտասարդների աչքերով

Սերգեյ Սոլովյովի «Քնքուշ հասակ» ֆիլմի պրեմիերան Երեւանում

«100 օր մանկությունից հետո», «Ասսա» եւ այլ հանրահայտ ու սիրված ֆիլմերի ռեժիսոր Սերգեյ Սոլովյովն օրերս Երեւանում էր, ուր «Մոսկվա» կինոթատրոնում ներկայացրեց իր նորավարտ «Քնքուշ հասակ» ֆիլմը: Ռուս անվանի կինոռեժիսորը, որ Հայաստան էր ժամանել 1700-ամյակի տոնակատարության կապակցությամբ, անձամբ էր ցանկություն հայտնել միջազգային կինոփառատոներում եւ մի շարք երկրներում մեծ հաջողությամբ ցուցադրված այս ֆիլմը հայ հանդիսատեսի դատին ներկայացնելու: Սոլովյովը մինչ ֆիլմի ցուցադրումը մի քանի խոսքով ներկայացրեց իր նորավարտ աշխատանքը, որի սցենարը գրել է որդու եւ այս կինոնկարի գլխավոր դերակատարի՝ Դմիտրիի հետ համատեղ:

«Սա պարզ ֆիլմ է, որի սյուժեն հիմնված է անմիջապես հետխորհրդային շրջանի երիտասարդության կյանքը ներկայացնող իրական պատմությունների վրա. դրանք ինձ պատմել է որդիս: Ես սկզբում չէի հավատում, որ մեր օրերում, մեր երեխաների հետ, հնարավոր է, որ նման բաներ կատարվեն: Սակայն փաստ է, որ մենք դաժան ժառանգություն ենք թողել մեր երեխաներին. նրանք խճճվել են ժամանակակից քաղաքական, տնտեսական եւ այլ անցուդարձերում, նրանք մեր ավագ սերնդի գործած սխալների զոհն են: Եվ ամենացավալին այն է նաեւ, որ մենք հաճախ պարզապես անտեսում ենք մեր զավակների ներքին աշխարհները, իսկ չէ՞ որ նրանք քնքուշ հասակում գտնվողներ, ավելի ազնիվ, խելացի եւ զգայուն են, քան մենք...», ֆիլմի բովանդակությունն ու տրամադրությունը ներկայացրեց ռեժիսորը: Ս. Սոլովյովի դերն ու նշանակությունը ռուսական կինեմատոգրաֆում, նրա արվեստը ներկայացրին նաեւ հայ գործընկերները՝ կինոռեժիսոր Ռուբեն Գեւորգյանցը եւ կինեմատոգրաֆիստների միության նախագահ Սերգեյ Իսրայելյանը:

Ֆիլմի ցուցադրմանը նախորդած գովեստներն ու բարձր գնահատականները, որ վերջիններս ներկայացրին հանդիսատեսին, լիովին արդարացրեցին իրենց: «Քնքուշ հասակը» դիտելով՝ առաջին հերթին մտածում ես, թե ինչպե՞ս է խորհրդային շրջանում ձեւավորված ավագ սերնդի կինոռեժիսորը կարողացել այդքան ճիշտ ընկալել ժամանակակից երիտասարդության խնդիրները, այդքան իրատեսորեն ցուցադրել անցումային ժամանակաշրջանում հայտնված մի ողջ սերնդի հոգեկան ճգնաժամը: Երիտասարդ, սակայն արդեն խեղված ճակատագրերի մի յուրատեսակ հանրագիտարան ներկայացնող այս ֆիլմի գլխավոր արժանիքներից է թերեւս, որ ռեժիսորը կարողացել է, ներքուստ համատեղելով, հանդիսատեսին մատուցել երկու, միմյանց անհարիր իրականություն՝ արտաքին անկենդան աշխարհն ու կինոնկարի հերոսների հարուստ, դինամիկ, կենդանի ներաշխարհը: Տարբեր հարթություններում գտնվող այդ իրականությունների, օբյեկտիվի ու սուբյեկտիվի բախումից էլ ծնվում ու զարգանում է ֆիլմի գլխավոր հերոսի՝ Իվան Գրոմովի կյանքի պատմությունը: Քնքուշ հասակի մի պատմություն՝ գեղեցիկ կառուցված այդ ֆիլմում, որն անպայման արժե դիտել...

ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

ՕՐԻՑԱՀԱՆԴԵՍ

Երեկ Թեմեյան կենտրոնում

Թեմեյան մշակութային միությունը երեկ Թեմեյան կենտրոնում բացեց «Հոգի եւ մարմին» ցուցահանդեսը, որը նվիրված է քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին: Այն բացեց ԹՄՄ վարիչ-քարտուղար Սերգեյ Գալուստյանը, նշելով. «Նկարների վերջնական ընտրությունը կանգ առավ 33 կտավների վրա, որոնք ներկայացրել էին միջին սերնդի 13 նկարիչներ, որոնցից շատերն այսօր դասավանդում են գեղարվեստի ակադեմիայում»: Ցուցահանդեսը բաց կլինի եւս չորս օր, որի ընթացքում հնարավոր կլինի ծանոթանալ այն նկարիչների գործերին, որոնք այսօր տոն են տալիս հայ գեղանկարչությանը: Ցուցահանդեսի բացմանը ողջույնի խոսք ասացին արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Գրիգոր Աղասյանը, բանաստեղծ Վարդան Վանաստուրը՝ բարձր գնահատելով ներկայացված աշխատանքները:



Նկարիչներից ոմանք, շարունակելով աշխարհի պատկերման ավանդները, փորձում են յուրացնել նաեւ մոտիվների այն խումբը, որ անցյալ դարավերջում ներմուծեցին Դեգան, Թուլուզ-Լոտրեկը, Պիկասոն... Նկարներում օրգանապես միաձուլված են ներշնչումը եւ հայ գեղանկարչության ավանդները: Գունահարաբերությունները մատուցված են նուրբ ու ճաշակով:

ԹՄՄ-ի հաջորդ՝ «Կարոտի օր-հին երեւան» խորագրով ցուցահանդեսը նվիրված «Երեբունի-Երեւան» տոնակատարությանը, հոկտեմբերի 8-ին կներկայացնի Գրիգոր Աղասյանի 20 աշխատանքները:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆՈՒԱՐՅԱՆ

Նոր ենք սկսում

Համահայկական երիտասարդական հիմնադրամը՝ ՀՊՃՀ-ին

ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի բարձր հովանավորությամբ 1998 թ. դեկտեմբերից Հայաստանում գործում է Համահայկական երիտասարդական հիմնադրամը (ՀԵՀ): Վերջինիս նպատակն է՝ օժանդակել երիտասարդության (մասնավորապես ուսանողության) սոցիալական պաշտպանությանը, գիտակրթական, առողջապահության ծրագրերի իրականացմանը: Այն նաեւ աջակցելու է երիտասարդության շահերն ու իրավունքները ամրագրող օրենսդրական դաշտի ստեղծմանը եւ նշված գործընթացում երիտասարդական կազմակերպությունների ներգրավմանը: Հիմնադրամի նպատակային ծրագրերում ընդգրկված են ուսանողական հանրակացարանների մասնակի վերանորոգումը, ուսանողների հանգստի կազմակերպումը, ուսանողական համակարգչային կենտրոնի ստեղծումը եւ այլն:

Իր գոյության երեք տարիների ընթացքում ՀԵՀ-ն իրագործել է իր նպատակային ծրագրերի մեծ մասը: Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում դրանք ի կատար են ածվում ուսխորհրդի միջոցով: Հիմնադրամի հովանավորությամբ արդեն երկրորդ տարին է, ինչ ՀՊՃՀ 60 ուսանողներ իրենց ամառային հանգիստն անցկացնում են Այրիվանի «Վինդսերֆինգ» առողջարան-ճամբարում: Իսկ 2000 թ. հունիսից համալսարանում գործում է «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների վարժանքային կենտրոնը»: Այնտեղ ուսանողների համար կազմակերպվում են համակարգչային ուսուցման անվճար դասընթացներ:

Ի դեմ, շուտով կենտրոնը կվերածվի հանրապետական նշանակության կրթօջախի:

ՀԵՀ-ի եւ ՀՊՃՀ ռեկտորատի աջակցությամբ ճարտարագիտական համալսարանի ՈՒՀԱ-ի «Բրավո» թիմը սեպտեմբերին Սեւանում մասնակցել է «Կարուսակ Սեւան» փառատոնին եւ սկսնակների մրցույթում գրավել առաջին տեղը՝ ստանալով հաջորդ տարի բարգույն լիգային մասնակցության ուղեգիր:

Հիմնադրամի հովանավորությամբ ՀՊՃՀ ուսխորհուրդն առաջիկայում նախատեսում է բացել անգլերեն լեզվի ուսուցման կենտրոն:

Համոզված ենք, որ ՀԵՀ-ի դեռեւս չիրականացած ծրագրերը շուտով կյանքի ուղեգիր կստանան:

ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

Մեծարժեք նվիրատվություն

Հայաստանի Ազգային գրադարանը օրերս հարստացավ մի ուրույն եւ ինքնատիպ հավաքածուով: Կահիրեի ՀԲԸՄ ատենապետ պարոն Պերճ Թերզյանը գրադարանին հանձնեց եգիպտահայ մամուլի՝ «Արեւ», «Յուսաբեր» եւ «Ջահակիր» պարբերականների մանրաժապավենային գրադարանը:

Եգիպտոսում հայ մամուլը սկզբնավորվել է 1865 թ. մարտի 16-ին, Կահիրեում, «Արմավենի» երկշաբաթաթերթով: «Արեւ» հասարակական-քաղաքական եւ գրական օրաթերթը հրատարակվում է Կահիրեում Ռամկավար Ազատական կուսակցության կողմից: «Արեւ»-ի հավաքածուն գրանցված է 86 մանրաժապավենի վրա եւ ընդգրկում է 1915-2000 թթ.: Նույնքան մանրաժապավենի վրա է գրանցված ՀՅԴ «Յուսաբեր» օրաթերթը (1913-200 թթ.), որը լույս է տեսնում Կահիրեում: «Ջահակիր»-ը լույս է տեսնում Կահիրեում 1948 թ.-ից: 1963 թ.-ից այն տպագրվում է Հնչակյան կուսակցության կողմից: Յոթը մանրաժապավենի վրա ներկայացված են «Ջահակիրի» հնչակյան շրջանի հրատարակությունները:

Եգիպտահայ պարբերականները գրանցված են 179 մանրաժապավենների վրա: Այս ընդարձակ ծրագիրն իրականացվել է Կահիրեի Հայկական բարեգործական ընդհանուր միության «Սաքենիկ Չագըր» հիմնադրամի միջոցներով:

ՆԵՐՍԵՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Հայաստանի ազգային գրադարանի փոխտնօրեն

ՅԱՊՐԱՆԿԱՐՅԻ ԱՇՔԵՐՈՎ

Մարզական

«Սպարտակի» եւ «Շիրակի» հանդիպումը 17-րդ տուրի կենտրոնական խաղն էր: Մինչ այդ «Սպարտակը» 5 անընդմեջ հաղթանակ էր տոնել նոր գլխավոր մարզչի՝ Հովհաննես Զանազանյանի գլխավորությամբ, «Շիրակն» էլ իր հերթին հաջող էր սկսել 2-րդ շրջանը՝ տանելով 3 անընդմեջ հաղթանակ: Խաղն ընթանում էր «Սպարտակի» որոշ առավելությամբ: Առաջին խաղակեսում նոպասավոր պահերը չօգտագործեցին սպարտակցիներ Հայկ եւ Արամ Հակոբյանները, Արտակ Մինասյանը, իր հերթին մոտ տարածությունից վրիպեց շիրակցի Վարդան Բիչախչյանը: Ընդմիջումից հետո սպարտակցիները մոտ 5 րոպե մրցակցին սթիպել էին մեծ ուժերով պաշտպանվել սեփական տուգանային հրապարակում: Հենց այդ ժամանակահատվածում էլ ծավալվեցին գլխավոր իրադարձությունները: 62-րդ րոպեին օգտվելով մրցակցի պաշտպանի սխալից, Ռազմիկ Գրիգորյանը հայտնվեց հարվածային դիրքում, սակայն գերազանց խաղաց դարպասապահ Ռայմոնդ Զադուրյանը: Մեկ րոպե անց Հայկ Հակոբյանի հարվածից հետո գնդակն անցավ դարպասածողի կողով: 65-րդ րոպեին Արամ Հակոբյանը ձախ թեւով սրընթաց մտավ տուգանային հրապարակ եւ Գագիկ Մարգարյանի հետ պայքարում վայր ընկավ: Մրցավարն առանց վարանելու ցույց տվեց 11 մ նշակետը, ինչը շիրակցիների բուռն բողոքն առաջացրեց: Այնուամենայնիվ, կրքերը հանդարտվեցին, եւ Արամ Հակոբյանը բացեց հաշիվը: Չանցած 3 րոպե, մրցավարը նոր 11 մ նշանակեց «Շիրակի» դարպասին, գտնելով, որ հրել էին Տիգրան Հովհաննիսյանին: Եվ այստեղ արդեն շիրակցիների նյարդերը չդիմացան, եւ թիմի ղեկավարության պահանջով նրանք լքեցին խաղադաշտը:

Որակի, դժվար է միանգամից գնահատական տալ մրցավայրի վճիռներին. ամեն ինչ շատ արագ կատարվեց: Նույնիսկ մասնագետներից շատերը դժվարանում էին որոշել՝ կա՞ր 11 մ, թե՞ ոչ (հատկապես առաջին դեպքում), նշելով, որ միայն այդ դրվագների տեսագրության մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո թերեւս հնարավոր լինի ճշգրիտ պատասխանել:

Ինչեւէ, ներկայացնեմ շահագրգիռ կողմերի տեսակետները, ինչպես ասում են, խաղի «տաք հետքերով»: Բնականաբար, շիրակցիները բորբոքված էին, եւ նրանց կարելի էր հասկանալ. 3 րոպեում 2 11 մ, որը իրոք որ հազվադեպ երեւույթ է: Ակումբի նախագահ Գառնիկ Խաչատրյանը եւ գլխավոր մարզիչ Անդրանիկ Ադամյանը խիստ դժգոհ էին գլխավոր մրցավարի սուբյեկտիվ, միակողմանի մրցավարությունից, գտնելով, որ նա խաղը դատում էր հօգուտ դաշտի տերերի: Նրանք համոզված էին, որ մրցավարը միտումնավոր է 11 մ նշանակել «Շիրակի» դարպասին: Երբ 2-րդ 11 մը նշանակվեց, գտան, որ այլեւս անիմաստ է շարունակել հանդիպումը եւ որոշեցին ավելորդ նյարդեր չվատնելու համար թիմը դուրս բերել ասպարեզից: «Շիրակի» ղեկավարությունը նաեւ գտնում էր, որ երեւանյան թիմի հետ նման կարեւոր խաղը չպետք է վարի երեւանցի մրցավարը:

«Սպարտակի» պետ Նիկոլայ Դաշտայանը համոզված է, որ երկու 11 մ հարվածներն էլ ճիշտ են նշանակվել, եւ դա կապացուցվի խաղի տեսագրությունը դիտելուց հետո: Նա գտնում էր, որ եթե մրցավարից բողոքելու առիթ կա, ապա «Սպարտակը» պետք է դժգոհ լինի, որ 0-0 հաշվի ժամանակ Գեւորգ Հովհաննիսյանը 11 մ չնշանակեց, երբ գնդակը դիպավ «Շիրակի» պաշտպանի ձեռքին, եւ խափանվեց վտանգավոր գրոհը, որը կարող էր գոլով ավարտվել:

Այժմ վերջնական խոսքը ֆուտբոլի ֆեդերացիայինն է: Իսկ մենք ֆուտբոլասերներին ներկայացնում ենք 17-րդ տուրի մյուս հանդիպումների համառոտ վիճակագրությունը:

Խաղերի արձանագրություններից

«Բանանց»–«Միկա»՝ 0–1 (0–1)

Անդրեյ Բուլանով (14)

«Կոտայք»–«Զվարթնոց»՝ 0–5 (0–2)

Մհեր Ավանեսյան (27, 63), Սեւադա Արզումանյան (41), Վահրամ Լոբյան (66), Սարգիս Նազարյան (90)

«Դինամո»–«Լեռնագործ»՝ 0–0

«Դարաքաղ»–«Փյունիկ»՝ 1–6 (0–3)

0-1՝ Վարազդատ Ավետիսյան (7), 0-2, 0-3՝ Արման Քարամյան (20, 38), 1-3՝ Արկադի Հակոբյան (51), 1-4՝ Արման Քարամյան (66), 1-5՝ Մամադու Դիավարա (69), 1-6՝ Վարդան Մինասյան (77, 11 մ):

Արտառոց միջադեպ. «Շիրակը» լքեց խաղադաշտը

Հայկական ֆուտբոլում տիրող հարաբերական անդորրը խախտվեց

Ֆուտբոլասերների հիշողություններում, անշուշտ, դեռ թարմ են մրցաշրջանի շեմին հայկական ֆուտբոլում ծավալված իրադարձությունները, երբ 7 ակումբներ հրաժարվում էին մասնակցել ՀՀ առաջնությանը պահանջելով ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահի հրաժարականը: Ստեղծված կոնֆլիկտային իրավիճակի հետեւանքով հարկ եղավ մեկ ամսով հետաձգել առաջնության մեկնարկը, մինչեւ կողմերը եկան կոմպրոմիսի: Սակայն դեռեւս այն ժամանակ շատերը կարծում էին, թե հաստատված խաղաղությունը հարաբերական է, եւ ցանկացած պահի անդորրը կարող է խախտվել: Եվ նրանք չսխալվեցին: Արդեն առաջնության մեկնարկում «Կիլիկիան» յուրօրինակ ձեւով արտահայտեց իր դժգոհությունը գործկոմի ընդունած սխալ որոշման դեմ հրաժարվելով առաջնության եւ գավաթի խաղերի մասնակցությունից: Ակումբի այդ քայլը միանշանակորեն չգնահատվեց. եղան թե հավանություն տվողներ, թե քննադատողներ: Ներքին զգացողությունը հուշում էր, որ մինչ առաջնության ավարտը էլի ինչ-որ արտառոց դեպքեր են տեղի ունենալու: Եվ ահա դա իրականություն դարձավ: Շաբաթ օրը «Հանրապետական» մարզադաշտում կայացած «Սպարտակ»–«Շիրակ» հանդիպումը մնաց անավարտ. խաղի 68-րդ րոպեին «Շիրակը» լքեց խաղադաշտը իր դժգոհությունն արտահայտելով գլխավոր մրցավար Գեւորգ Հովհաննիսյանի գործողություններից:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Փյունիկ	13	12	0	1	59-13	36
2. Արարատ	14	11	1	2	34-10	34
3. Շիրակ	14	10	2	2	38-11	32
4. Զվարթնոց	15	10	0	5	37-14	30
5. Միկա	15	8	4	3	31-16	28
6. Սպարտակ	13	8	3	2	31-9	27
7. Բանանց	15	6	3	6	27-18	21
8. Դինամո	14	4	3	7	13-27	15
9. Լեռնագործ	14	2	3	9	12-39	9
10. Դարաքաղ	14	1	3	10	8-44	6
11. Կոտայք	15	0	2	13	11-53	2
12. Լոռի	14	0	2	12	11-58	2

Ռմբարկուները

Արման Քարամյան «Փյունիկ»	16
Սարգիս Նազարյան «Զվարթնոց»	10
Հայկ Հարությունյան «Փյունիկ»	9
Արամ Հակոբյան «Սպարտակ»	9
Արամ Ոսկանյան «Փյունիկ»	8
Մկրտիչ Հովհաննիսյան «Բանանց»	8
Տիգրան Դավթյան «Շիրակ»	8
Անդրեյ Բուլանով «Միկա»	8
Մհեր Ավանեսյան «Զվարթնոց»	8
Արմեն Մարկոսյան «Միկա»	7
Վարդան Մինասյան «Փյունիկ»	7
Հայկ Հակոբյան «Սպարտակ»	7
Արարատ Հարությունյան «Շիրակ»	7

Առաջինը Միկա Հակինենն է

«Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի առաջնության նախավերջին փուլն անցկացվեց Ինդիանապոլիսում: Դժվարին մրցուղին բոլորից արագ հաղթահարեց եւ առաջինը վերջնագիծը հասցեց ֆինն մարզիկ Միկա Հակինենը՝ «Մակլարեն» թիմից: Միխայիլ Շումախերը երկրորդն էր: Երրորդը վերջնագիծը հասցեց Դեւիդ Կուլթհալդը:

ՖՈՒՏԲՈԼ

Ազգային հավաքականը սկսել է նախապատրաստությունը

Ֆուտբոլի ՀՀ ազգային հավաքականը սեպտեմբերի 30-ից սկսել է նախապատրաստությունը հոկտեմբերի 6-ին Նորվեգիայի հավաքականի հետ կայանալիք ընտրական մրցախաղին: Ինչպես տեղեկացրեց հավաքականների տեխնիկական տնօրեն Արմեն Խանդանյանն, առաջին պարապմունքին մասնակցել են Հայաստանի թիմերում հանդես եկած ֆուտբոլիստները: Երեկ առավոտյան Երեւան են ժամանել Կարեն Դոխոյանն ու Երվանդ Սուքիասյանը, իսկ երեկոյան խաղընկերներին են միացել Հարություն Վարդանյանը եւ Արթուր Պետրոսյանը: Այսօր պարապմունքներում կներգրավվեն մեր մյուս լեգեոնականները՝ Ռոման Բերեզովսկին, Սարգիս Հովսեփյանը, Ալբերտ Սարգսյանը, Ռոմիկ Խաչատրյանն ու Միքայել Մարգարովը: Ցավոք, վնասվածքի պատճառով Երեւան չի ժամանի Անդրեյ Մովսիսյանը: Ուսումնամարզական հավաքի են հրավիրվել նաեւ Քարամյան եղբայրները, որոնք նախնական կազմում բացակայում էին:

Հավաքականն օրական երկու պարապմունք է անցկացնում Աբովյանում, իսկ վաղվանից երեկոյան մարզումը տեղի կունենա «Հանրապետական» մարզադաշտում: Ուսումնամարզական հավաքը կազմակերպվել է «Դվին» հյուրանոցում:

Գլխավոր մրցավարը ճիշտ վճիռ է կայացրել

Երեկ ֆուտբոլի հանրապետական ֆեդերացիայում տեղի է ունեցել «Սպարտակ»-«Շիրակ» հանդիպման տեսագրության քննարկում, որի արդյունքում հաստատվել է, որ գլխավոր մրցավար Գեւորգ Հովհաննիսյանը երկու դեպքում էլ ճիշտ վճիռ է կայացրել՝ նշանակելով 11 մ հարվածներ «Շիրակի» դարպասին: Ինչ վերաբերում է հանդիպման վերաբերյալ պաշտոնական որոշմանը, ապա առայժմ այն չի կայացվել: Հարցը պետք է քննարկվի կարգապահական կոմիտեի նիստում: Ըստ այդ կոմիտեի փոխնախագահ Պրն Խրիմյանի, մրցակարգի համաձայն «Շիրակին» պետք է պարտություն գրանցվի 0-3 հաշվով, ինչպես նաեւ նախատեսվում է դրամական տուգանք եւ ադմինիստրատիվ տույժ ակումբի ղեկավարությանը:

ՇԱԽՄԱՏ

Միրանույշ Անդրեասյանի գերազանց ելույթը

Տիգրան Պետրոսյանի անվան շախմատիստի տանն անցկացվող շախմատի Հայաստանի բարձրագույն խմբի կանանց առաջնությունում գերազանց է հանդես գալիս Միրանույշ Անդրեասյանը, որը 5 տուրից հետո 4,5 միավորով միանձնյա գլխավորում է մրցաշարային աղյուսակը: Ընդորում, Միրանույշը մեկնարկային չորս տուրերում միայն հաղթանակներ էր տոնել եւ միայն 5-րդ տուրում Նելլի Աղինյանին հաջողվեց կանգնեցնել նրա հաղթարշավը՝ ոչ-ոքի ավարտելով հանդիպումը:

Հաջող է խաղում նաեւ միջազգային վարպետ Գոհար Հլղաթյանը, որն առաջատարից հետ է մնում կես միավորով: 3,5-ական միավոր են վաստակել Նելլի Աղինյանը, Նոնա Սահակյանը եւ Լիլիթ Գալոյանը: 3 միավոր ունի Նարինե Գասպարյանը, 1,5՝ Նարինե Դումանյանը, 1՝ Անի Դարբինյանը: Կես միավոր է վաստակել Հերմինե Մխիթարյանը, իսկ ահա Նարա Հայրապետյանը դեռեւս միավոր չունի:

Ահա կայացած հանդիպումների արդյունքները.

2-րդ տուր

Սահակյան–Դումանյան՝ 1/2–1/2
Աղինյան–Հայրապետյան՝ 1–0
Անդրեասյան–Գասպարյան՝ 1–0
Գալոյան–Դարբինյան՝ 1/2–1/2
Հլղաթյան–Մխիթարյան՝ 1–0

3-րդ տուր

Մխիթարյան–Սահակյան՝ 0–1
Դարբինյան–Հլղաթյան՝ 0–1
Գասպարյան–Գալոյան՝ 1–0
Հայրապետյան–Անդրեասյան՝ 0–1
Դումանյան–Աղինյան՝ 0–1

4-րդ տուր

Սահակյան–Աղինյան՝ 1/2–1/2
Անդրեասյան–Դումանյան՝ 1–0
Գալոյան–Հայրապետյան՝ 1–0
Հլղաթյան–Գասպարյան՝ 1/2–1/2
Մխիթարյան–Դարբինյան՝ 1/2–1/2

5-րդ տուր

Դարբինյան–Սահակյան՝ 0–1
Գասպարյան–Մխիթարյան՝ 1–0
Հայրապետյան–Հլղաթյան՝ 0–1
Դումանյան–Գալոյան՝ 0–1
Աղինյան–Անդրեասյան՝ 1/2–1/2

Դավիթ Նալբանդյանն առաջադիմում է

Արգենտինահայ թենիսիստ Դավիթ Նալբանդյանն ընթացիկ մրցաշրջանում բավական հաջող մրցելույթներ է ունենում: Նա հաջող հանդես եկավ Պալերմոյի մրցաշարում՝ հասնելով մինչեւ եզրափակիչ: Այստեղ Նալբանդյանի մրցակիցը իտալացի փորձառու թենիսիստ Ֆելիխս Մանտիլյան էր, որն էլ հաղթեց 7–6, 6–4 հաշվով: Դավիթ Նալբանդյանը կմասնակցի Մոսկվայում մեկնարկած «Կրեմլի գավաթի» խաղարկությանը:

Պահպանեցին չեմպիոնի կոչումը

Բուլղարիայի Վառնա քաղաքում վերջնագիծը հասցեց վոլեյբոլի կանանց եվրոպայի առաջնությունը: Վճռական խաղում միմյանց հետ ուժերը չափեցին ներկայիս չեմպիոն Ռուսաստանի եւ Իտալիայի վոլեյբոլիստուհիները: Չափազանց ծանր ու լարված մրցակցությունում ռուս վոլեյբոլիստուհիները կարողացան հաղթանակ տոնել (3–2) եւ պահպանեցին Եվրոպայի չեմպիոնի կոչումը: Ռուսաստանի հավաքականն արդեն 4-րդ անգամ է նվաճում մայրցամաքի չեմպիոնի կոչումը: Կիսաեզրափակիչում ռուսները հաղթել էին ուկրաինացիներին (3–0), բուլղարացիները նույն հաշվով զիջել էին իտալացիներին:

3-րդ տեղի համար պայքարում Բուլղարիայի հավաքականը հաղթեց Ուկրաինայի ընտրանուն:

Բաժինը վարում է
ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

ԵՐԱԽՏԱՄՈՐՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանցիները «մոռացել են» իրենց շարքերում կռվող թալիբներին

Այն, որ դարաբաղա-ադրբեջանական հակամարտության ողջ ընթացքում Ադրբեջանի քաղաքական իշխանությունները միշտ էլ նենգափոխել են փաստերը եւ միտումնավոր աղաղակողմնորոշել հանրությանը՝ այժմ ոչ ոքի չի զարմացնում: Բնավ զարմանալի չէ նաեւ մեր հարեւան պետության պահեստային սպաների միության հանկարծակի ակտիվացումն օրվա թեմա դարձած միջազգային ահաբեկչության առիթով:

Իրենց հայտարարության մեջ Ադրբեջանը վերստին ներկայացնելով իբրեւ «հայկական ահաբեկչության զոհ», նրանք հերքում են նաեւ դարաբաղյան պատերազմում մեծ թվով թալիբների մասնակցությունը հօգուտ Ադրբեջանի: Ըստ երեւույթին նրանք մոռացել են իրենց մոլեռանդ զինակիցներին, որոնց ներկայությամբ երբեւէ խիստ ոգեւորված էին:

Ի դաստախան ադրբեջանցի սպաների այս սին հերքման, օրերս Արցախի պետական հեռուստատեսությունը ցուցադրեց ռազմագործողությունների ժամանակաշրջանում արցախցի լրագրողների նկարահանած կադրերը գերի ընկած թալիբների մասին: Նրանցից մեկը՝ Բախտիար անունով, Աֆղանստանի Մազարի Շարիֆ քաղաքից, վաս թուրքերենով լրագրողներին պատմում էր, որ ինքը եւ իր ընկերները Դարաբաղ են եկել «Թալիբան» կազմակերպության դրոշի տակ՝ մուսուլման եղբայրներին օգնելու: Բախտիարը գերի էր ընկել Ֆիզուլու շարաժում եւ զարմանալի է, որ «թալիբական արժանապատվությամբ» ինքնասպան չէր եղել գերի ընկնելու ժամանակ: Երիտասարդ աֆղանցու համար կյանքը երեւի քաղցր է եղել, եւ կրոնական մոլեռանդությունը տեղի է տվել բնական կենսասիրությանը:

Ավելացնենք, որ Արցախի հեռուստատեսությունը մեկ անգամ չէ, որ ցուցադրել է ադրբեջանական բանակի կազմում կռվող վարձկան այլազգիների գերեվարման մասին իրական կադրեր: Վարձկաններ, որոնց դարաբաղյան ճակատ է բերել նաեւ իրենց հավատակիցների հանդեպ, այսպես կոչված, «պարտքի զգացումը»: Գրոհայինների համար, թերեւս, փողը եւ պարտքը նույն հասկացությունն են: Եվ Ադրբեջանում այս իրողությունը միշտ էլ գնահատել են յուրովի:

ԵՂԻՇԵ ԱԲԵԱԿՅԱՆ
Ստեփանակերտ

Ալիեւը եւ Շեւարդնաձեն պայմանագիր ստորագրեցին գազի արտահանման վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հ. Ալիեւի եւ Է. Շեւարդնաձեի միջեւ Բաքվում ստորագրվել է Վրաստանով ադրբեջանական գազի արտահանման վերաբերյալ միջպետական պայմանագիր, ինչը Ադրբեջանի նախագահը որակել է որպես «պատմական նշանակության իրադարձություն»:

Ինչպես գրում է ադրբեջանական «525-րդ» թերթը, Հ. Ալիեւը հայտարարել է, թե այդ պայմանագիրը կարեւոր է ոչ միայն իրենց երկրների, այլեւ ողջ Կովկասի եւ Եվրոպայի համար, քանի որ դրանով տարածաշրջանն ավելի ամուր է կապվում Արեւմուտքի հետ: Նա կարծիք է հայտնել, որ էներգակիր խողովակները տարածաշրջանի անվտանգության մի տեսակ երաշխիք են: Վրաստանի նախագահն իր հերթին հույս է հայտնել, որ Վրաստանի եւ Ադրբեջանի միջեւ տնտեսական համագործակցությունը շուտով կտա իր պտուղները եւ ադրբեջանցի ժողովրդին համարել է երջանիկ, քանի որ նա ապրում է «բնական հարստություններով առատ մի երկրում»:

Լրագրողների այն հարցին, թե ինչպես է աղահովվելու ապագա գազատարի անվտանգությունը միջազգային ահաբեկչության աճի պայմաններում, Ադրբեջանի նախագահը պատասխանել է, որ այդ հարցը կարեւոր է, քանի որ երկու երկրներն էլ ներգրավված են ռազմական հակամարտությունների մեջ, եւ անհրաժեշտ են կտրուկ միջոցառումներ՝ գազատարի պահպանության համար: Նա կարեւորել է միջազգային համագործակցությունը ահաբեկչության դեմ պայքարում եւ նշել, «Ով մեզ մեղադրում է ահաբեկչության կազմակերպման մեջ, ինքն է հենց զբաղվում ահաբեկչությամբ»:

Վրաստանի նախագահին շփոթեցրել է այն հարցը, թե արդյո՞ք Վրաստանում բնակվող ադրբեջանցիների նկատմամբ կիրառվող ճնշումները պետք է դիտել որպես պետական քաղաքականություն, թե՞ առանձին մարդկանց գործողությունների արդյունք: Իր գործընկերոջն օգնության հասած Ադրբեջանի նախագահը հայտարարել է, թե իրենք այդպես մտածելու համար որեւէ լուրջ հիմքեր չունեն, ինչին հետեւել է Շեւարդնաձեի պատասխանը. «Ամեն ինչ կարգին է»:

Ցուգի ահաբեկիչն ատում էր թե իշխանություններին եւ թե լրագրողներին

ՁԼՄ-ներն արդեն հաղորդել են Շվեյցարիայում Լյուցեռնից ոչ հեռու գտնվող Ցուգ փոքրիկ քաղաքում տեղի ունեցած սպանդի մասին: Սեպտեմբերի 27-ին, առավոտյան ժամը 10:30-ին Ցուգի տեղական խորհրդարան էր մտել նույն քաղաքի 57-ամյա բնակիչ Ֆրից Լայբախերը, լուսանկներ տեղացել պատգամավորների, վարչակազմի, դասական իշխանությունների, հանրային տրանսպորտի ղեկավարության հասցեին եւ միաժամանակ տարբեր զինատեսակներից (այդ թվում երկու հրացաններից) կրակ բացել ներկաների վրա: Ընդամենը 4 րոպեում նա սպանել էր 14 անձանց, այդ թվում 11 պատգամավորի եւ տեղական կառավարության 7 նախարարներից 3-ին: «Սոնդ» թերթի թղթակիցը մանրամասնում է, որ ակնհայտորեն գրգռված Լայբախերը բղավելով պահանջում էր Ցուգի ֆինանսների նախարարին, որն այդպես էլ չերեւաց: Մարդասպանը լուսանկներ էր տեղում նաեւ լրագրողների հասցեին՝ նրանց անվանելով «նողկալի բաներ գրող խոզերի հրոսակախումբ»: Լայբախերի կրակոցներից վիրավորվեցին 14 ուրիշ անձինք, այդ թվում 2 նախարարներ եւ տեղական «Նոյե Ցուգեր ցայտունգ» թերթի 3 թղթակիցներ: Վերջում ահաբեկիչն անձնասպան եղավ նռնակով:

«Նոյե Ցուգեր ցայտունգի» թղթակիցը գրում է, որ Լայբախերը հանրային տրանսպորտի համակարգի նախկին աշխատող էր, վերջերս տարբեր այցաններ էր դիմել բողոքագրերով, որոնք բոլորն էլ մերժվել էին: Լրատվամիջոցները գրեթե միաբերան խելագար են անվանում Լայբախերին: Ոճրագործը մոլագարություն ուներ զենքերի նկատմամբ: 1970 թ. նա դատվել եւ 18 ամսվա բանտարկության էր դատապարտվել խարդախությունների, փաստաթղթերի կեղծման եւ անչափահասների հանդեպ ոտնձգությունների կատարման մեղադրանքներով:

Նույն թերթը գրում է, որ Ցուգի խորհրդարանի պատգամավորները «մաչելի են, դյուրահաղորդ, պաշտպանում են ընտրողների իրավունքները», ինչպես հաճախ է լինում փոքր քաղաքներում:

Պատահական չէ, որ խորհրդարանում տեղի ունեցած սպանդն ընկալվում է որպես ընդհանուր ողբերգություն: Քաղաքի դպրոցների աշակերտները շաբաթավերջին ժամերով հերթ էին կանգնում ցավակցությունների մատյանում գրառում կատարելու համար:

Ժնեւի «Տան» օրաթերթը տեղեկացնում է, որ շաբաթ երեկոյան 4000 մարդ է մասնակցել Ցուգում անցկացված ջահերթին: Խորհրդարանի դեմքերից հետո ականատեսներին օգնելու նպատակով քաղաքում գործում է հոգեբանական հատուկ ծառայություն: Դաշնային խորհրդարանի պատգամավոր Կասպար Ֆիլիգերի կարծիքով, Լայբախերի գործողություններում իշխում էր պետության հանդեպ ատելությունը: «Մշտապես հակասություն է գոյանում բաց հասարակության եւ բացարձակ անվտանգության միջեւ», նշում է նա: Պատգամավոր Ռուբ Մեցլերն առաջարկում է փոփոխել մասնավոր անձանց զենք վաճառելուն վերաբերող 1999 թ. օրենքը, ինչպես նաեւ զենք կրելու կանոնները:

Հոգեբաններից շատերի կարծիքով, սեպտեմբերի 11-ին Նյու Յորքում եւ Վաշինգտոնում իրականացված ահաբեկչությունները կարող են որոշակի դեր խաղացած լինել Լայբախերի գործողություններում՝ խախտելով հոգեպես անկայուն այդ ոճրագործի «հակազդման շեմը»: Նման մարդիկ հաճախ օգտվում են առիթից եւ փորձում են ապացուցել, որ իրենք եւս ընդունակ են ահաբեկչության: Ի դեպ, Ցուգի ոստիկանությունը ձերբակալել է 56-ամյա մի մարդու, որը խորհրդարանի դեպքերի հաջորդ օրն սպառնալիքներ էր հասցեագրել մի բանկաշիրջ:

Երեկ կեսօրին Ցուգում տեղի ունեցավ ահաբեկչության զոհերի թաղումը: Հուղարկավորները շարժվում էին վառվող մոմերի թափորով: Ժամը 10-ին ամբողջ Շվեյցարիայում հայտարարված էր լռության րոպե: Ամբողջ երկրում խոնարհված էին դրոշները: Հուղարկավորությանը մասնակցում էին Շվեյցարիայի նախագահ Լեւենբերգերը, բարձրաստիճան այլ անձինք:

Պ. Բ.

ARMENTEL

Արմենտելը տեղեկացնում է

Հոկտեմբերի 1-ից գործում են բաժանորդների տեղեկատվական երկու անվճար ծառայություններ:

Զանգահարեք՝

183-բջջային կապի տեղեկատվական ծառայություն

182-Տեղական ցանցի տեղեկատվական ծառայություն

Ի գիտություն ԱՐՄԵՆՏԵԼԻ բաժանորդների

Սկսվել է 22, 23, 24 եւ 28 կայանների բաժանորդների փոխանջատումը նոր թվային կայանին: Փոխանջատման հետ կապված բոլոր աշխատանքները կատարվում են Արմենտել ՀՁ ՓԲԸ-ի կողմից ԱՆՎՃԱՐ:

ԱՐՄԵՆՏԵԼ ՀՁ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ARMENTEL

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արմենտելն աշխատանքի է հրավիրում բարձր որակավորում ունեցող մասնագետների.

- Համակարգչային ծրագրավորողներ
- Ինտերնետային բնագավառի մասնագետներ
- Ինտերնետ եւ հեռահաղորդակցության ծառայության վաճառքի գործակալներ

Պահանջվում է.

Բարձրագույն մասնագիտական կրթություն: Անգլերենի իմացությունը պարտադիր է:

Ցանկացողները մինչեւ 2001 թ. հոկտեմբերի 10-ը կարող են դիմել Արմենտելի կադրերի ղեկավարման վարչություն (Երեւան, Ահարոնյան 2, 516 սենյակ, հեռ. 28.23.22):

Անհրաժեշտ է ներկայացնել կրթության վերաբերյալ փաստաթղթեր, համառոտ կենսագրական տվյալներ (ռեզյումե հայերենով, անգլերենով):

ԱՐՄԵՆՏԵԼ ՀՁ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԲԱԺԻՆ

1991-2001 ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՏԱՍՆԱՄՅԱԿ

Դասախոսությունների շարք ծրագիր

Հայաստանում Բուլղարիայի ժամանակավոր հավատարմատար

Իվան Իվանչեւը

ներկայացնում է՝

«Հայ-բուլղարական հարաբերություններն արդի փուլում»

Չորեքշաբթի, հոկտեմբերի 3-ին, 2001, ժամը 18:00-ին
Հայաստանի ամերիկյան համալսարանի փոքր դահլիճում

Դասախոսությունը կընթանա ռուսերենով՝ անգլերեն համընթաց թարգմանությամբ

Մուտքն ազատ է

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 51-27-07

Հետաքննող լրագրողների ընկերակցություն

Դիմեք «Ինֆորմացիայի ազատության» կենտրոն, երբ պաշտոնյաները մերժում են ձեզ ինֆորմացիա տալ:

Հասցե՝ Երեւան, Դեղատան փող. 4, բն. 1 ա, հեռ. 524105, 529240 էլ. փոստ shushan@internews.am. versused@arminco.com

@rminco
Global Telecommunications

ՆՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ինֆորմացիայի վերականգնում
- Համակարգչային սարքավորումների վերանորոգում

ՆՈՐ ԳՆԵՐ, ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆՏԵՐՆԵՏ քարտի օգտագործում 20% ցածր գներով

- Գիշերայինը՝ ամսական $ 20
- Շուրջօրյան՝ ամսական $ 50
- Էլ. փոստը՝ ամսական $ 10

Հեռ.՝ 52-43-51, 52-63-26
E-mail: support@arminco.com
WEB: http://www.arminco.com

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 1.10.2001 Գինը՝ 100 դրամ